THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ

ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ (ՇՆՊ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ (P508124)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԻԾ

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
1.1. Ծրագրի նկարագրություն 7
1.1.1. Գործունեություն/Բաղադրիչներ 7
1.1.2. Իրականացնող գերատեսչություններ 9
1.1.3. Նախագծի տարածք և շահառուներ 10
1.2. Շահակիրների ներգրավման պլանի նպատակն ու ծավալը 12
1.3. Շահակիրների ներգրավման սկզբունքները 15
1.4. Սահմանափակումներ 17
2. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 19
2.1. Ծրագրի շահակիրները 19
2.2. Պոտենցիալ ազդակիր կողմեր 20
2.3. Պոտենցիալ հետաքրքրված կողմեր 24
2.4. Անապահով կամ խոցելի խմբեր 25
3. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 27
3.1. Ներգրավման եղանակները 27
3.2. Տեղեկատվության հանրայնացում և հանրային քննարկում 27
3.3. Հանրային քննարկումների և խորհրդատվությունների ազգային պահանջները 29
3.4. Շահակիրների ներգրավման գործունեության ամփոփում ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում 29
3.5. Շահագրգիռ Կողմերի Ներգրավումը Նախագծի Իրականացման Ընթացքում 30
3.6. Հաշվետվողականությունը շահակիրներին 34
3.7. Միջոցներ և պատասխանատվություն 35
3.7.1. Կառավարման գործառույթներ և պատասխանատվություն 35
3.7.2. Միջոցներ 36
4. ԱՐՁԱԳԱՆՔ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 37
4.1. Արձագանքի և բողոքների լուծման մեխանիզմի նպատակը 37
4.2. Բողոքների ներկայացում և լուծում 38
4.3. Բողոքների փակումը 39
4.4. Բողոքների գրանցում եւ փաստաթղթավորում 39
4.5. Սեռական շահագործման և չարաշահման/Սեռական ոտնձգությունների հետ կապված բողոքներ 40

Հավելված 1. Յուրաքանչյուր բաղադրիչի ներքո Ծրագրի գործողությունների մանրամասն նկարագրությունը 41

Հավելված 2. ԱԲԼՄ տեղական համակարգողների եւ ԱԲԼՄ համակարգողների կոնտակտային տվյալներ 51

Հավելված 3. ՇՆՊ բյուջե 52

Հավելված 4. Հանրային քննարկման արձանագրություն 54

Հապավումներ

ԱԱ	**Առողջություն և անվտանգություն**
ԱԱԱ	Աշխատանքային առողջություն և անվտանգություն
ԱԿԸ	Աշխատանքի կառավարման ընթացակարգեր
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱԱՏՄ	Առողջության և աշխատանքի տեսչական մարմին
ԱԲԼՄ	Արձագանման և Բողոքների լուծման մեխանիզմ
ԲԱԱՌԻ	Բնապահպանական, առողջության և անվտանգության ուղեցույցներ
ԲՋՄ	Բազմափուլային զարգացման մոտեցում
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ԲԼՀ	Բողոքների լուծման հանձնաժողով
ԲՄ	Բողոքների մեխանիզմ
ԲՍԱԱ	Բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԳ	Բնապահպանական և սոցիալական գնահատում
ԲՍԿՇ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՍՀՊ	Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլան
ԲՍՇ	Բնապահպանական և սոցիալական շրջանակ
ԲՍՍ	Բնապահպանական և սոցիալական ստանդարտ
ԳՋՋԾ	Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ
ԶՖԳ	Զարգացման ֆրանսիական գործակալություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԻԳ	Իրականացման գրասենյակ
ԻՋՊԿ	Ինտեգրված Ջրի և պլանավորման կենտրոն
ԾԱԵԱ	Ծրագրի ազդեցության ենթակա անձինք
ԾԳՄ	Ծրագրի գործադիր մարմին
ԾԻԳ	Ծրագրի իրականացման գործակալություն
ԾԶՆ	Ծրագրի զարգացման նպատակ
ԾՀԹ	Ծրագրի համակարգման թիմ
ԿՀՊ	Կատարողականի վրա հիմնված պայմաններ
ԿԻՀ	Կենսապայմանների ինտեգրված հետազոտություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՀ	Համայնքային կապի համակարգող
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՀՄԿ	Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն
ՄՊ	Մշտադիտարկման պլան
ՄԵԳ	Մշտադիտարկում և գնահատում
ՆԾՖ	Ներդրումային ծրագրի ֆինանսավորում

ՆԾՖ	Ներդրումային ծրագրի ֆինանսավորում
ՇԵՊ	Շահագործում և պահպանում
ՇՆՇ	Շահակիրների ներգրավման շրջանակ
ՇՆՊ	Շահակիրների ներգրավման պլան
ՈՆՋ	Ոռոգում և ջրահեռացում
ՈՋՀՀԱԿ	Ոռոգման ջրի հաշվառման և հարմարվողականության ազգային կենտրոն
ՈՎՀԾ	Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի
ՈՃԾ	Ոռոգման ծառայությունների վճար
ՉՋ	Չհաշվառված ջուր
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՋՈԾԲ	Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիրը
ՋԿ	Ջրային կոմիտե
ՋՋ	Ջրամատակարարում և ջրահեռացում
ՋՄԸ	Ջրամատակարար ընկերություն
ՋՕԸ	Ջրօգտագործող ընկերություններ
ՄՇՉ	Սեռական շահագործում և չարաշահում
ՄՈ	Սեռական ոտնձգություններ
ՎՋՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՎԿՏՋՀ	Վերահսկիչ Կառավարման և Տվյալների Ձեռքբերման (SCADA) համակարգ
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՊ	Տարաբնակեցման պլան
ՏՔՇ/ՏՇ	Տարաբնակեցման (քաղաքականության) շրջանակ
ՓՎ	Փոխվարչապետ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԿ	Ֆինանսական կառավարում

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիրը (WISE) մշակվում է՝ ծրագրի ազդեցության տարածքում ոռոգման համակարգերի, ինչպես նաև գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (ԳՋՋ) ծառայությունների կլիմայական առումով դիմացկուն հասանելիությունը, արդյունավետությունը և ֆինանսական կայունությունը բարելավելու նպատակով:

Սույն Շահակիրների ներգրավման պլանը (ՇՆՊ) պատրաստվել է շահակիրների ներգրավման աշխատանքներն ուղղորդելու նպատակով՝ թե՛ Ծրագրի նախապատրաստման, և թե՛ իրականացման ընթացքում:

Սույն ՇՆՊ-ի նախնական տարբերակը կհանրայնացվի և հասանելի կլինի կարծիքների և խորհրդատվության համար: Շահակիրներից ստացված արձագանքները կներառվեն ՇՆՊ-ի վերջնական տարբերակում:

1.1. Ծրագրի նկարագրություն

1.1.1. Գործունեություն/Բաղադրիչներ

Ծրագրի զարգացման նպատակն (ԾԶՆ) է ապահովել բարելավված հասանելիություն դեպի արդյունավետ և ֆինանսապես կայուն ոռոգման և գյուղական ՋՋ ծառայությունները Հայաստանի ընտրված տարածքներում: Ծրագիրը հանդիսանում է 10-ամյա Բազմափուլային զարգացման մոտեցման (ԲԶՄ) մի մաս, որի նպատակն է բարելավել ոռոգման և գյուղական ՋՋ ծառայությունների մատուցումը Հայաստանում: Փուլ 1-ը նախագծված է կլիմայակայուն ոռոգման և ՋՋ ծառայությունների բարելավման համար: Թվով վեց Ջրօգտագործող ընկերություններին (ՋՕԸ) այն կապահովի ժամանակակից ոռոգման համակարգերով և կբարելավի ոռոգման ծառայության արդյունավետությունը՝ ընտրված սխեմաներում առաջնային, երկրորդային և երրորդային ցանցերի արդիականացման միջոցով՝ խթանելու կլիմայական դիմացկունությունը երաշտի, ջրհեղեղների և ծայրահեղ շոգի նկատմամբ: Փուլ 1-ը նաև կբարելավի հասանելիությունը դեպի կայուն ՋՋ ծառայություններ՝ մշակելով գյուղական ՋՋ ներդրումային պլաններ և արդիականացնելով ջրամատակարարման ենթակառուցվածքները: Նաև կմշակվեն տեխնիկատնտեսական հիմնավորումներ, նախագծեր և մրցութային փաստաթղթեր Փուլ 2-ի համար: Ավելին, Փուլ 1-ը կներառի նաև Կատարողականի վրա հիմնված պայմաններ (ԿՀՊ)՝ աջակցելու քաղաքականության, իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին, ինչպես նաև ուսումնական ծրագիր, որը փաստաթղթավորում է պատկերացումները՝ հետազոտությունների, տվյալների վերլուծության և քաղաքականության մշակման միջոցով ծրագրի իրականացման

գործընթացը ուղղորդելու համար: Ծրագրի Փուլ 1-ի իրականացման ժամանակահատվածը կտևի վեց տարի:

Փուլ 1-ը բաղկացած է չորս բաղադրիչից, այդ թվում՝ մեկ բաղադրիչ ԿՀՊ-ներով: Այդ բաղադրիչները հետևյալն են.

ա. **Բաղադրիչ 1՝ Ջրային ոլորտի բարեփոխում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում,** աջակցում է ՏԿԵՆ-ին և Ջրային Կոմիտեին (ՋԿ) առանցքային առաջնահերթ ոլորտներում, ներառյալ ջրի, ոռոգման և գյուղական բնակավայրերում խմելու ջրի և ջրահեռացման համար ազգային ռազմավարությունների մշակումը; ոռոգման ջրի սակագների վերանայումը՝ հիմնված հողօգտագործման և ջրի սպառման վրա; արդիականացված ոռոգման սխեմաների համար Ակտիվների սպասարկման միջոցների և պլանի մշակումը; Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (ԳՋՋ) ստորաբաժանումների ստեղծումը՝ սահմանված համաձայնագրերով, կատարողականի վրա հիմնված պայմաններով և մոնիտորինգի համակարգերով; և Ոռոգման ջրի հաշվառման և հարմարվողականության ազգային կենտրոնի (ՈՋՀՀԱԿ) (ԿՀՊ-ներով) գործարկումը՝ ջրի կառավարման և հարմարվողականության ջանքերը բարելավելու համար : Այս բաղադրիչը կներառի նաև երկու ԿՀՊ, որոնք ուղղված են ՏԿԵՆ-ում, ՋԿ-ում և ՋՕԸ-ներում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը աջակցելուն:

բ. **Բաղադրիչ 2՝ Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում** բաղադրիչը կկենտրոնանա Հայաստանի ընտրված տարածքներում արդյունավետ և ֆինանսապես կայուն գյուղական ՋՋ ծառայությունների բարելավված հասանելիությունը ապահովելու վրա: Սա ներառում է ինստիտուցիոնալ հզորացման, կարողությունների ստեղծման, ինչպես նաև կարգավորող բարեփոխումների և տեխնիկատնտեսական հիմնավորումների և ենթակառուցվածքների գնահատումների համադրություն: Այս ենթաբաղադրիչն աջակցելու է առաջնահերթ Ջրամատակարարման և ջրահեռացման (ՋՋ) ներդրումների տեխնիկատնտեսական հիմնավորումներին և մանրամասն ինժեներական նախագծերին՝ ԲՋՄ-ի երկու փուլերի շրջանակներում կլիմայով պայմանավորված երաշտների, ջրհեղեղների և ծայրահեղ շոգի դեմ դիմացկունությունը բարելավելու համար: Հայաստանի Կառավարության (ՀԿ) հետ համաձայնեցված ներդրումային պլանի հիման վրա, այն կիրականացնի «առանց ափսոսանքի» ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավումներ առաջնահերթ չսպասարկվող բնակավայրերում՝ հաշվի առնելով տեխնիկական, տնտեսական, սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ գործոնները:

գ. **Բաղադրիչ 3՝ Ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում** բաղադրիչը կֆինանսավորի ընտրված ոռոգման համակարգերի վերականգնումը և արդիականացումը մայր, երկրորդ և երրորդ կարգի ջրանցքների մակարդակներում, որոնք

ներկայումս համատեղ կառավարվում են ջրամատակարար ընկերությունների կողմից՝ խոշոր մայր ջրանցքի և ջրամբարների մակարդակում, և ՋՕԸ-ների կողմից՝ երկրորդ և երրորդ բաշխիչ ցանցերի մակարդակում: Դիտարկվող ոռոգման համակարգերի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 39,580 հա, որը կընտրվի հիդրոլոգիական, տեխնիկական, տնտեսական և գյուղատնտեսական պարամետրերի հիման վրա՝ Շրջանակային մոտեցմամբ[1]: Նմանապես, Փուլ 2-ի համար լրացուցիչ 4 ոռոգման սխեմաներ ընդգրկվել են այս փուլի շրջանակներում դիտարկվելու համար:

դ. Բաղադրիչ 4՝ Ծրագրի կառավարում: WISE Ծրագրի համակարգման թիմը (ԾՀԹ) կտեղակայվի Ջրային Կոմիտեում և կստանձնի ծրագրի իրականացման հիմնական պատասխանատվությունը, այդ թվում՝ շինարարական աշխատանքների իրականացումը, դրանց հետ կապված գնումների գործընթացի և ֆինանսական միջոցների կառավարումը (ՖԿ), ընդունված բնապահպանական և սոցիալական կառավարման միջոցառումների հետ համապատասխանության ապահովումը, ինչպես նաև ծրագրի մոնիտորինգն ու գնահատումը (ՄևԳ): Այս բաղադրիչը կֆինանսավորի անձնակազմի ծախսերը; ջրային ոլորտում Միջազգային ֆինանսական կազմակերպության (ՄՖԿ) կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի հետ սույն ծրագրի գործողությունների համակարգումը; ծրագրի ելակետային և ավարտման ուսումնասիրությունների նախագծումը, իրականացումը և հաշվետվությունների ներկայացումը; և գնահատման ուսումնասիրությունների (օրինակ՝ նախնական և տեխնիկատնտեսական հիմնավորումներ), մանրամասն ինժեներական նախագծերի մշակումը և շինարարության վերահսկողությունը: Բաղադրիչը կներառի նաև կարողությունների զարգացման աջակցություն ԾՀԹ-ին, ներառյալ ԾՀԹ-ի աշխատակիցների վերապատաստում:

Ծրագրի գործողությունների մանրամասն նկարագրությունը յուրաքանչյուր բաղադրիչի և ենթաբաղադրիչի ներքո ներկայացված է Հավելված 1-ում:

1.1.2. Իրականացնող գերատեսչություններ

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) և Ջրային կոմիտեն (ՋԿ) պատասխանատու կլինեն Ծրագրի բոլոր գործողությունների համար: ՋԿ-ի կազմում գործող Ծրագրի համակագման թիմը (ԾՀԹ) կաջակցի ծրագրի ամենօրյա գործունեության իրականացման հարցում: Բաղադրիչներ 1-3-ը կիրակաբնացվեն ՏԿԵՆ-ի միջոցով: ՀՀ փոխվարչապետի գրասենյակի մակարդակով կստեղծվի Ծրագրի կառավարման կոմիտե՝ ծրագրի ընդհանուր առաջընթացը վերահսկելու և մշտադիտարկելու համար: Ծրագրի ղեկավարը, հավանաբար, հաշվետու կլինի կառավարման կոմիտեին: Ազգային ջրի ռազմավարության, Ազգային ոռոգման ռազմավարության և Ազգային ՋՋ ռազմավարության մշակումը կիրականացվի փոխվարչապետի գրասենյակի ղեկավարությամբ, ՏԿԵՆ-ի և ՋԿ-ի կողմից՝ ջրային ոլորտում

ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի, ինչպես նաև ջրային ոլորտի զարգացման մեջ ներգրավված այլ կազմակերպությունների սերտ մասնակցությամբ:

ՇՀԹ-ը պատասխանատու կլինի յուրաքանչյուր բաղադրիչի համար ենթածրագրային միջամտությունների բացահայտման, մրցութային փաստաթղթերի մշակման, խորհրդատվական ծառայությունների և ենթածրագրերի նախագծերի ձեռքբերման համար: ՇՀԹ-ը կապահովի, որ աշխատանքի կառավարման ընթացակարգերը ներառվեն մրցութային փաստաթղթերում/աշխատանքային պայմանագրերում: Բացի այդ, այն կղեկավարի շինարարական աշխատանքների գնման գործընթացը և կապահովի տեխնիկական վերահսկողությունը:

1.1.3. Նախագծի տարածք և շահառուներ

Առաջարկվող ծրագրի տարածքները ընտրվել են ՋԿ-ի և ՏԿԵՆ-ի հետ սերտ համագործակցությամբ՝ հիմնվելով մարզերի վրա, որտեղ ոռոգման համակարգերը պահանջում են անհապաղ արդիականացում և որտեղ կլիմայական ուսումնասիրությունը ցույց է տալիս տեղումների փոփոխականության աճ և մակերևութային ջրերի պակաս՝ պահանջելով ներդրումներ՝ ոռոգման համակարգերը բարելավելու համար: Բաղադրիչներ 1-ը և 2-ը կմիջամտեն ազգային մակարդակում՝ կենտրոնանալով ՋԿ-ի, Ջրամատակարար ընկերությունների և ընտրված ՋՕԸ-ների համար իրավական, կարգավորող, ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունների բարեփոխումների վրա: Բաղադրիչ 3-ի շրջանակներում ոռոգման արդիականացման ներդրումները կդիտարկվեն հետևյալ ջրանցքներում/մարզերում՝ ա) Կոտայքի մայր ջրանցքի ոռոգման համակարգը Կոտայքի մարզում, բ) Արզնի-Շամիրամի մայր ջրանցքի ոռոգման համակարգը Արագածոտնի և մասամբ Կոտայքի մարզերում, գ) Ստորին Հրազդանի մայր ջրանցքի ոռոգման համակարգը Արմավիրի մարզում, դ) Դեբետավանի ջրանցքը Տավուշի մարզում և ե) Լոռու ջրանցքի ոռոգման համակարգերը Լոռու մարզում: Առաջարկվող նախագծային բոլոր տարածքներում գերակշռում են մանր սեփականատերերը (միջին չափով՝ 1.2 հա), որոնք զգալիորեն ենթարկվում են ջրի պակասի և կլիմայական փոփոխությունների ազդեցությանը:

Բաղադրիչ 3-ի (ոռոգում) ուղղակի շահառուները՝ սահմանված որպես բոլոր ընտրված սխեմաների հողատերեր, կազմում են մոտավորապես 31,614 (տես աղյուսակ 1), որոնց 65% մանր սեփականատերեր են (հողամասեր՝ մինչև 1 հա): Դրանք ներառում են ֆերմերներ, ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններ, կանայք և երիտասարդներ: Նրանցից 7,414-ը գրանցված կին սեփականատերեր են. հետևաբար շահառուների մոտավորապես 23.5%-ը ակնկալվում է, որ կլինեն կանայք: Ծրագրի բոլոր միջոցառումները նախագծվել են կանանց և կանանց խմբերի ակտիվ ներգրավումը խթանելու համար՝ ապահովելով հավասար շահեր՝ այդ թվում՝ ՋՕԸ-ի ղեկավար դերերում: Այս խմբերի սպասվող օգուտների շրջանակը ներառում է կենսապահովման

հնարավորությունների և աշխատատեղերի ավելացում ոռոգվող գյուղատնտեսության մեջ և երաշտների ու ջրհեղեղների նկատմամբ խոցելիության նվազեցում:

Բաղադրիչ 2-ի (ԳԲՋՋ) ուղղակի շահառուները՝ որպես բոլոր թիրախային բնակավայրերի բնակիչներ, ներկայումս չսպասարկվող բնակավայրերում կազմում են մոտ 17,000 շահառու: Բացի այդ, ինչպես նկատվել է նախորդ «Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի» (IREP) շրջանակներում, այս նախագիծը կունենա զգալի ազդեցություն զբաղվածության վրա այն տարածքներում, որտեղ տեղի կունենան շինարարական աշխատանքներ, ինչպես նաև ամբողջ երկրի համար: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող վերականգնման աշխատանքները աշխատատար են և ծրագրի իրականացման փուլում կնպաստեն բազմաթիվ աշխատատեղերի ստեղծմանը: Ազգային մակարդակում ծրագիրը կնպաստի նաև աշխատատեղերի ստեղծմանը բետոնի գործարաններում և ավազի ու խճաքարի հանքերում (տե՛ս ստորև աղյուսակը): Ստեղծված աշխատատեղերի մեծ մասը բաժին կընկնի ձմեռային ամիսներին՝ թույլ տալով թերզբաղված և սեզոնային անգործ ֆերմերներին ունենալ եկամտի այլընտրանքային աղբյուր:

Աղյուսակ 1. Շահառուներն ըստ բաղադրիչների և սեռի

Բաղադրիչի անվանում	Գետային ավազան	Գետավազանի կառավարման տարածք	Մարզ	Հողատերերի/Տնային տնտեսությունների/Շահառուների թիվը	Կին հողատերերի /Տնային տնտեսությունների/ Շահառուների թիվը	Հողատերեր/ Տնային տնտեսություններ՝ մինչև 1 հա (% ընդհանուրից)
Կոտայքի ոռոգման ջրանցք (Բաղադրիչ 3)	Հրազդան	Հրազդան	Կոտայք	4,171	810	98.0
Արզնի-Շամիրամ ոռոգման սխեմա (Բաղադրիչ 3)	Հրազդան, Քասախ, Մեծամոր	Հրազդան, Ախուրյան	Կոտայք, Արագածոտն	18,835	5,606	80.7
Ստորին Հրազդանի ոռոգման սխեմա (Բաղադրիչ 3)	Հրազդան, Քասախ, Մեծամոր	Էջմիածին, Երևան	Արմավիր, Երևան	5,089	754	58.1

Դեբետավանի ջրանցքի ոռոգման սխեմա (Բաղադրիչ 3)	Դեբեդ	Հյուսիսային	Տավուշ	644	35	44.2
Լոռու ջրանցքի ոռոգման սխեմա (Բաղադրիչ 3)	Դեբեդ	Հյուսիսային	Լոռի	2,875	209	66.3
Ջրամատակարարում չսպասարկվող բնակավայրերում (Բաղադրիչ 2)				17,000	8,500	Կիրառելի չէ
Ընդհանուր				**48,614**	**15,914**	**347.3**

Ինստիտուցիոնալ շահառուներ։ Բաղադրիչ 1, 2 և 3-ի շրջանակներում աջակցվող գործողություններն ուղղված են ջրային ռեսուրսները կառավարող, ոռոգման և խմելու ջրի ու ջրահեռացման ծառայություններ մատուցող կենտրոնացված և ապակենտրոնացված պետական գերատեսչություններին։ Ակնկալվում է, որ այս պետական գերատեսչությունների աշխատակիցները կշահեն իրենց լիազորությունների իրականացման համար տեխնիկական և գործառնական կարողությունների զարգացումից, բարելավված սարքավորումներից և ջրային ռեսուրսների և հիդրոկլիմայական ռիսկերի հետ կապված օգտագործողների վրա կենտրոնացած և ժամանակին որոշումների կայացմանն աջակցող առավել հասանելի տվյալների առկայությունից։

1.2. Շահակիրների ներգրավման պլանի նպատակն ու ծավալը

ՋՈԾԲ (WISE) ծրագիրը պատրաստվում է Համաշխարհային բանկի Բնապահպանական և սոցիալական շրջանակին (ԲՍՇ) համապատասխան։ Համաձայն Շահակիրների ներգրավման և տեղեկատվության բացահայտման Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 10-ի (ԲՍՍ)՝ իրականացնող մարմինները պետք է շահակիրներին տրամադրեն ժամանակին, տեղին, հասկանալի և մատչելի տեղեկատվություն և խորհրդակցեն նրանց հետ մշակութային առումով ընդունելի ձևով, որը զերծ է շահարկումից, միջամտությունից, հարկադրանքից, խտրականությունից կամ ահաբեկումից։

Սույն ՇՆՊ-ի **ընդհանուր նպատակն** է սահմանել շահակիրների ներգրավման ծրագիր, ներառյալ հանրային տեղեկատվության հրապարակումը և խորհրդատվությունը Ծրագրի ողջ ընթացքում։ ՇՆՊ-ն նախանշում է այն ուղիները, որոնցով ծրագիրն իրականացնող

գործակալությունը շփվելու է շահակիրների հետ և ներառում է մեխանիզմ, որով մարդիկ կարող են բարձրաձայնել մտահոգությունները, արձագանքել կամ բողոքներ ներկայացնել ծրագրի գործողությունների կամ ծրագրի հետ կապված որևէ գործունեության վերաբերյալ:

ՇՆՊ-ն ընդգրկում է Ծրագրի ընդհանուր գործողությունները՝ առաջնահերթություն տալով պոտենցիալ բնապահպանական և սոցիալական ռիսկեր ունեցողներին: Այնուամենայնիվ, մուտքի կետերը կուսումնասիրվեն այն ոլորտներում, որտեղ զարգացման հնարավորությունները կարող են իրականացվել ծրագրրի ռեսուրսների միջոցով:

Ենթածրագրի և/կամ տեղանքին բնորոշ մակարդակի ներգրավումը կինտեգրվի Ծրագրում որպես համապատասխան գործողությունների ընդհանուր նախագծման և իրականացման մաս: Կախված ենթածրագրի գործունեության տիպաբանությունից՝ ներգրավման ակնկալվող մակարդակը, ինչպես նաև մոտեցումներն ու եղանակները կարող են սահմանվել որպես i) ռազմավարական ներգրավում, իրազեկման բարձրացում և հանրային խորհրդատվություններ՝ տեղեկացնելու քաղաքականության մշակման, ինստիտուցիոնալ բարեփոխումների և կարողությունների զարգացման մասին տեխնիկական աջակցության գործունեությամբ և ii) տեղական մակարդակի ներգրավում ենթակառուցվածքային ներդրումների բաղադրիչի ներքո, ինչպես վերականգնման, այնպես էլ նոր շինարարության համար:

Հիմնական ոլորտները, որտեղ շահակիրների ներգրավումն ու իրազեկումը կլինի առաջնահերթություն, հետևյալն են

ա. Ծրագրի գործունեության հետ կապված հնարավոր բացասական ազդեցությունների կառավարում: Նման ազդեցությունները կարող են առաջանալ հետևյալ դեպքերում.

- Որոշակի բարեփոխումների իրականացում, ինչպիսիք են ջրի սակագները և սուբսիդիաները, որոնց դեպքում ծառայություններին միացված մնալու համար ավելի բարձր ծախսեր են կրում տնային տնտեսությունները: Որոշ խոցելի տնային տնտեսություններ կարող են զրկվել աջակցությունից:
- Տեղանքին բնորոշ ենթակառուցվածքի գործունեության իրականացում՝ հողերի ձեռքբերման, հողօգտագործման ժամանակավոր և մշտական սահմանափակումների, շինարարության հետ կապված ազդեցությունների, ծառայությունների ժամանակավոր ընդհատումների և այլնի պատճառով:
- Ոռոգման ջրի անհավասար և անարդար բաշխում օգտագործողների միջև շահագործման ընթացքում՝ առաջնահերթություն տալով խոշոր ֆերմերներին, ոռոգման ջրի մատակարարումը խոցելի ջրօգտագործողներին իրականացնելով միայն գիշերային հերթափոխով և այլն:

բ. Զարգացման պոտենցիալ հնարավորությունների և սոցիալական ընդունելիության բարձրացում: Ծրագիրը կարող է սահմանել լրացուցիչ միջոցներ՝ խթանելու մասնակցությունը և բարձրացնելու Ծրագրի օգուտների հասանելիությունը՝ ջրի և ջրային ծառայությունների հասանելիության առումով ստեղծելով հնարավորություններ կանանց և խոցելի խմբերի համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով, աղքատ տնային տնտեսությունները, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խմբերը: Դրանք կարող են ուսումնասիրվել հետևյալի միջոցով.

- ծրագրի ներդրումների միջոցով ունիվերսալ նախագծի և կլիմայական դիմացկունության ներդրում

- տեղական համայնքների համար հնարավորությունների օգտագործում ծրագրի կողմից ստեղծված զբաղվածության, ՋՋ և ոռոգման ծառայությունների հասանելիության, խոցելի խմբերին թիրախավորելու միջոցով:
- ավելի արժեքավոր մշակաբույսերի մշակության վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարածում
- Ազդակիր համայնքներում կանանց համար սեմինարների կազմակերպում իրենց բերքի սպառման ավելի արդյունավետ մեթոդների, շուկայավարման հիմունքների և այլնի վերաբերյալ:

Վերոնշյալ նպատակները կարող են ուսումնասիրվել շահակիրների բովանդակալից ներգրավման միջոցով, որը երկկողմանի հաղորդակցում է՝ կենտրոնանալով ***խորհրդատվության, համագործակցության և շահակիրների հզորացման վրա:*** Այն ներառում է.

· **Իրազեկում** - տեղեկատվություն տեղեկագրերի, բրոշյուրների, կայքերի, սոցիալական ցանցերի, մամուլի հաղորդագրությունների, մամուլի ասուլիսի միջոցով;

· **Խորհրդատվություն** - տեղեկացված որոշումների համար տեղեկությունների և հետադարձ արձագանքի ստացում՝ հարցումների, ֆոկուս խմբերի, սոցիալական լրատվամիջոցների, առցանց քննարկումների, հանրային հանդիպումների, ֆորումների, աշխատաժողովների, անհատական զրույցների միջոցով;

· **Համագործակցություն** – աշխատանք շահակիրների հետ՝ հասկանալու նրանց խնդիրները և մտահոգությունները պատասխանները համատեղ ձևակերպելու նպատակով՝ օգտագործելով ֆորումները, խորհրդատվական հարթակները, կլոր սեղանի քննարկումները, գործընկերությունը;

· **Լիազորում** – որոշ հարցերի վերաբերյալ որոշումների կայացման պատվիրակում շահակիրներին՝ շահակիրների կառավարման կառուցվածքում որպես հանձնաժողովի անդամներ ինտեգրելու միջոցով (օրինակ՝ Բողոքների լուծման հանձնաժողովում, Համայնքների զարգացման հանձնաժողովում):

Համայնքային մակարդակում շահակիրների ներգրավումը կարող է դիտվել նաև որպես համայնքի ներգրավման շարունակականություն:

Նկար 1 – Համայնքի ներգրավման շարունակականություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ				
Իրազեկում ***Համայնքի որոշ մասի ներգրավում*** Համայնքին տեղեկությունների տրամադրում	**Խորհրդատվություն** ***Համայնքի ավելի մեծ հատվածի ներգրավում*** Հաղորդակցությունն ուղղված է դեպի համայնք՝ հետադարձ արձագանքի ակնկալիքով	**Ներգրավում** ***Համայնքի ավելի լայն ներգրավում*** Երկկողմանի հաղորդակցություն, մասնակցային հաղորդակցություն	**Համագործակցում** ***Համայնքի ներգրավում*** Համագործակցություն համայնքի հետ Ծրագրի յուրաքանչյուր ասպեկտում՝ մշակումից մինչև լուծում	**Համատեղ պատասխանատվություն** ***Սեփականության և պատասխանատվության ձևավորում*** Սեփականության զգացմունքի ձևավորում

Ստորև ներկայացված նկար 1-ը, որն ադապտացված է Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի կողմից կազմված դիագրամից, ցույց է տալիս նման շարունակականության մակարդակները:

Ելնելով վերը ներկայացված մոդելից՝ Ծրագիրը պետք է կիրառի շահակիրների ներգրավման համապատասխան մոտեցում, որը համահունչ է յուրաքանչյուր խմբի կարիքներին և բնութագրերին: Խոցելի բնակչության համար, ինչպիսիք են կանայք, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք, տեղահանված անձինք և աշխատանքային միգրանտները, պետք է կիրառվի ներգրավման ավելի ընդգրկուն և մասնակցային մոդել՝ ապահովելով նրանց ձայնը, լսելիությունը և նրանց կարիքների բավարարումը: Կառավարական կառույցների, տեղական իշխանությունների և ինստիտուցիոնալ շահագրգիռ կողմերի համար առավել արդյունավետ կլինի համագործակցային մոտեցումը, որը կենտրոնացած է գործընկերության և համակարգման վրա: Ներգրավման այս տարբերակված ռազմավարությունը կօգնի ապահովել, որ բոլոր խմբերը բովանդակալից ներգրավված լինեն Ծրագրում, և նրանց ներդրումները ձևավորեն Ծրագրի արդյունքները:

Այս ՇՆՊ-ն հիմնված է առ այսօր ՋԿ-ի կողմից ստեղծված և/կամ իրականացված գործունեության վրա: Նման ներգրավումը ներառում է շահագրգիռ կողմերի ներգրավման գործունեությունները, որոնք իրականացվել են Ջրային կոմիտեի հետևյալ ծրագրերի շրջանակներում, որպես Ծրագրերի Իրականացման Գործակալություն:

- Ջրային ռեսուրսների համալիր կառավարում / Ախուրյան գետ, Կապսի ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում, որը ֆինանսավորվում է KfW-ի կողմից
- Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր (ՀԵԾ) II, Փուլ 3, որը ֆինանսավորվում է Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ)/KfW-ի կողմից:

Այս ծրագրերի իրականացումը սկսվել է Ջրային Կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի կողմից և շարունակվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

1.3. Շահակիրների ներգրավման սկզբունքները

Լավ գործելակերպի մոտեցումներին համապատասխանեցնելու համար Ծրագիրը շահագրգիռ կողմերի ներգրավման համար կկիրառի հետևյալ սկզբունքները.

· **Թափանցիկություն ու շրջափուլային մոտեցում.** Ծրագրի հանրային խորհրդատվությունները կկազմակերպվեն Ծրագրի ողջ շրջափուլի ընթացքում՝ բաց եղանակով, առանց արտաքին մանիպուլյացիայի, միջամտության, հարկադրանքի կամ ահաբեկման:

· **Տեղեկացված մասնակցություն ու հետադարձ արձագանք.** տեղեկատվությունը համապատասխան ձևաչափով կտրամադրվի և լայնորեն կտարածվի բոլոր շահագրգիռ կողմերի միջև. հնարավորություններ են ընձեռնվում շահագրգիռ կողմերին՝ կարծիք հայտնելու, ինչպես նաև մեկնաբանություններն ու մտահոգությունները վերլուծելու և լուծելու համար:

· **Ներառականություն ու զգայունություն.** շահակիրների նույնականացումն իրականացվում է հաղորդակցությունն ուժեղացնելու և արդյունավետ հարաբերությունները խթանելու համար: Ծրագրին մասնակցության գործընթացը ներառական է՝ յուրաքանչյուր փուլում խրախուսելով բոլոր շահագրգիռ կողմերին ներգրավվել խորհրդատվություններում: Տեղեկատվության հավասար հասանելիությունն ապահովված է բոլոր շահագրգիռ կողմերի համար, նրանց կարիքների նկատմամբ զգայունությունը կանխորոշում է ներգրավման մեթոդների ընտրությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում խոցելի խմբերին, որոնց դեպքում առկա է Ծրագրի օգուտներից դուրս մնալու վտանգը, այսպիսի խմբերն են՝ աղքատության շեմին ապրող ընտանիքները, կանայք, տարեցները և հաշմանդամություն ունեցող անձինք, տեղահանված անձինք, աշխատանքային միգրանտները, ինչպես նաև հաշվի է առնվում էթնիկ խմբերի մշակութային զգայունությունը:

· **Ճկունություն.** մշակութային համատեքստը (օրինակ՝ որոշակի գենդերային դինամիկան) կամ կառավարման գործոնները (օրինակ՝ վրեժխնդրության բարձր ռիսկը) խաթարում է դեմ առ դեմ ներգրավման ավանդական ձևերը, մեթոդաբանությունը պետք է հարմարվի ներգրավման այլ ձևերին, ներառյալ համացանցով կամ հեռախոսային հաղորդակցման տարբեր ձևերը:

Շահակիրների ներգրավման շրջափուլը ներառում է հետևյալ տարրերը.

- Շահակիրների ներգրավում և փոխգործակցություն, համագործակցության համար երկխոսության նախաձեռնում,
- Համագործակցության նշաձողերի բացահայտում շահակիրների շահերի և կարիքների վերանայման միջոցով, համագործակցության ընդլայնում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ընդհանուր հատվածներ գտնելու միջոցով,
- Համագործակցություն և մասնակցություն Ծրագրի գործողություններին՝ իրենց շահերի հետապնդման, իրենց կարիքների բավարարման, որոշումների կայացման գործընթացների վրա ազդելու հնարավորության համար,
- Մասնակցային գործընթացներում ներգրավումը թույլ կտա նրանց արտահայտել իրենց կարծիքը, կիսել պատասխանատվությունն արդյունքների համար և տեր կանգնել արդյունքներին:

Շահակիրների ներգրավումը շարունակական շրջափուլ է, որը նորովի է սկսվում իր վերջնական կետին հասնելուց հետո: Այս գործընթացը ներառում է ձեռքբերումների գրանցում, հետադարձ կապի հավաքում, կատարողականի բարելավում, նպատակների թարմացում և շրջափուլի կրկնում ավելի բարձր մակարդակով: Այս մոտեցումը ներառում է նոր շահակիրների բացահայտում և ներգրավում՝ միաժամանակ պահպանելով համագործակցությունը հին գործընկերների հետ:

Ներգրավման կոնկրետ մոտեցումները կորոշվեն՝ հիմնվելով համատեքստերի վրա, երբ ծրագրի իրականացման ընթացքում որոշվեն տեղանքին բնորոշ ներդրումները և/կամ քաղաքականությանը առնչվող բարեփոխումները:

1.4. Սահմանափակումներ

Շահակիրներն անհատներ կամ խմբեր են, որոնք շահագրգռված են կամ ազդեցություն ունեն ծրագրերի վրա: ՇՆՊ-ի նպատակն է ներգրավել բոլոր շահագրգիռ կողմերին կամ առնվազն նրանց համապատասխան խմբերին և հաշվի առնել նրանց կարիքներն ու շահերը Ծրագրում: Այնուամենայնիվ, շահագրգիռ կողմերի ակնկալիքները և հարաբերությունները կառավարելը կարող է դժվար լինել, հատկապես, երբ նրանք ունեն հակասական կամ մրցակցող շահեր, կարծիքներ կամ պահանջներ:

Նախապատրաստական փուլում հայտնաբերված շահագրգիռ կողմերի ներգրավման սահմանափակումները կարող են ներառել հետևյալը.

ա) Անորոշություն տեղանքին բնորոշ ներդրումներում

- Քանի որ ներդրումների հստակ վայրերը և ազդակիր շահակիրները դեռ լրիվ նույնականացված չեն, ներգրավման պլանը մնում է շրջանակ, այլ ոչ թե մանրամասն պլան:
- Սա դժվարացնում է թիրախային խորհրդակցությունների իրականացումը և ազդակիր համայնքների մասնակցությունը:
- ՇՆՊ-ը պետք է թարմացվի կիսամյակը մեկ՝ տեղանքին բնորոշ մանրամասները ի հայտ գալուն պես:

բ) Գյուղատնտեսական սեզոն

- Գյուղատնտեսական սեզոնի ընթացքում՝ գարնան կեսերից մինչև աշնան կեսերը, ֆերմերների և ջրօգտագործողների մեծ մասը գտնվում են իրենց դաշտերում, զբաղված են այգեգործությամբ, իրենց հողերի մշակմամբ և չեն ցանկանում լքել իրենց աշխատանքը և մասնակցել խորհրդակցություններին:
- Քննարկումների մասնակիցները ոռոգման ջրային սխեմաների շահագրգիռ կողմեր չեն, քանի որ նրանք ֆերմերներ կամ ջրօգտագործողներ չեն:

գ) Խոցելի խմբերի ներառման հետ կապված մարտահրավերներ

- Անապահով խմբերը (կանայք, տարեցներ, փոքր ֆերմերներ, տեղահանված անձինք) կարող են դժվարանալ մասնակցել տնտեսական կամ սոցիալական խոչընդոտների պատճառով:
- Ոռոգման և ջրամատակարարման ծառայությունների հետ կապված որոշումների կայացման գործընթացներում բացառման ռիսկ:
- Կանայք և մարգինալ խմբերը կարող են լավ ներկայացված չլինել Ջրօգտագործող ընկերություններում (ՋՕԸ) կամ տեղական կոմիտեներում:

դ) Շահակիրների հոգնածություն և ներգրավման գերբեռնվածություն

- Բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ շարունակական ներգրավվածությունը (կառավարություն, ՋՕԸ, ֆերմերներ, տեղական ձեռնարկություններ) կարող է հյուծել կողմերին, եթե հանդիպումները հաճախակի են, և չի դիտվում հստակ առաջընթաց:
- Շահակիրները կարող են դադարեցնել ներգրավվելը, եթե զգան, որ խորհրդատվությունները կրկնվող են կամ չունեն շոշափելի արդյունքներ:

ե) Բողոքների լուծման հետ կապված մարտահրավերներ

- Արձագանքման և բողոքների լուծման մեխանիզմը (ԱԲԼՄ) առկա է, սակայն շահակիրները կարող են տեղյակ չլինել կամ վստահություն չունենալ գործընթացի նկատմամբ:

- Ռիսկ կա, որ մարգինալ խմբերը կարող են իրենց հարմար չզգալ բողոքներ ներկայացնելիս:

Շահակիրների ներգրավման վերը նշված սահմանափակումները վերացնելու համար Ծրագիրը պետք է հետևի շահագրգիռ կողմերի, մասնավորապես՝ խոցելի և մարգինալ խմբերի հետ հարաբերություններ հաստատելու և կառուցելու հստակ գործընթացին, ինչպես նկարագրված է սույն ՇՆՊ-ում:

Գյուղատնտեսական սեզոնի ընթացքում դաշտերում կարող են կազմակերպվել կարճ քննարկումներ՝ կարճ ժամանակով ընդհատելով շահակիրների գյուղատնտեսական գործունեությունը՝ վերջիններիս արձագանքը ստանալու և գրավոր տեղեկատվական նյութեր տրամադրելու համար:

Սահմանափակումները հաղթահարելու համար շահակիրների շահերը պարբերաբար կգնահատվեն ֆոկուս խմբերի, խորհրդատվությունների և այլ մեթոդների միջոցով՝ ապահովելով, որ առաջարկվող ՇՆ գործողությունները լինեն թիրախավորված և բավարարեն շահակիրների կարիքները և տեսակետը: Ծրագրի անձնակազմի և շահակիրների համար, անհրաժեշտության դեպքում, կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ՝ վերջիններիս արդյունավետ ներգրավելու համար: Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը բնապահպանական և սոցիալական ռիսկերի մասին պատշաճ կերպով կհրապարակվի ժամանակին և հասանելի ձևաչափերով՝ բազմազան լսարանների համար հասանելի դարձնելու նպատակով: Բողոքների լուծման մեխանիզմը կխթանի երկկողմանի հաղորդակցությունը, մինչդեռ տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցությունը կօգնի հաղթահարել միմյանց հասկանալու և վստահելու հետ կապված բացերը: Ներգրավման ռազմավարությունները պարբերաբար կգնահատվեն՝ շարունակական բարելավում և շահակիրների կարիքներին արձագանքելը ապահովելու նպատակով:

2. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1. Ծրագրի շահակիրները

Ծրագրի շահակիրները սահմանվում են որպես անհատներ, պաշտոնական և ոչ պաշտոնական խմբեր և կազմակերպություններ և/կամ կառավարության գերատեսչություններ, որոնց շահերի կամ իրավունքների վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն կազդի Ծրագիրը, ինչպես դրական, այնպես էլ բացասական, որոնք կարող են շահագրգռված լինել Ծրագրի իրականացմամբ, և ովքեր ունեն Ծրագրի արդյունքների վրա որևէ կերպ ազդելու ներուժ:

Համաձայն ՀԲ Բնապահպանական և սոցիալական շրջանակի Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 10-ի (ԲՍՍ10)՝ Շահակիրների ներգրավում և տեղեկատվության հանրայնացում, շահակիրները դասակարգվում են.

- Ազդակիր կողմերի – շահակիրներ, ովքեր ազդեցության են ենթարկվում կամ կարող են ենթարկվել Ծրագրի կողմից,
- Այլ հետաքրքրված կողմերի – այլ կողմեր, ովքեր հետաքրքրված են Ծրագրով:

Որպես շահակիրների հատուկ կատեգորիա, ՇՆՊ-ն նույնականացնում է անապահով կամ խոցելի խմբերին՝ անհատներին կամ խմբերին, ովքեր կարող են Ծրագրի բացասական ազդեցությանը ենթարկվել և/կամ պահանջում են ներգրավման հատուկ ջանքեր իրենց խոցելի կարգավիճակի պատճառով[1]՝ ապահովելու նրանց հավասար ներկայացվածությունը Ծրագրի վերաբերյալ խորհրդատվության և որոշումների կայացման գործընթացում: Ջանքեր կգործադրվեն բացահայտելու խոցելի, անապահով կամ մարգինալացված խմբերին և պարզելու նրանց առանձնահատուկ կարիքները:

Հիմնվելով նման դասակարգման վրա՝ ՇՆՊ-ն ուրվագծում է ներգրավման համապատասխան մեխանիզմները, դրանց մոտավոր ժամանակացույցը, դերերն ու իրականացման պատասխանատվությունը և ՇՆՊ միջոցառումների իրականացման համար հատկացված միջոցները: Շահակիրների ներգրավման մեխանիզմները կնախագծվեն համաձայն ՇՆՊ-ում նույնականացված խոցելի խմբերի կարիքների:

Նկար 2 – Գործընկերներ, պոտենցիալ ազդակիր և այլ հետաքրքրված կողմեր

[1] Խոցելի կարգավիճակը կարող է առաջանալ անհատի կամ խմբի, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական դիրքորոշումից, ունեցվածքից, տարիքից, մշակույթից, գրագիտությունից, ունեցած հիվանդությունից, ֆիզիկական կամ հոգեկան հաշմանդամությունից, աղքատություն կամ տնտեսական անբարենպաստ դրությունից, ինչպես նաև բնական ռեսուրսներից կախվածությունից:



2.2. Պոտենցիալ ազդակիր կողմեր

Ազդակիր կողմերը ներառում են տեղական համայնքները, համայնքի անդամներին և այլ կողմեր որոնք կարող են ենթարկվել Ծրագրի անմիջական ազդեցությանը:

Բաղադրիչ 2-ի շրջանակներում՝ առաջին փուլում ներդրումները նախատեսվում են մի քանի մարզերում՝ հիմնվելով տեխնիկական, տնտեսական, սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ նկատառումների վրա: Բաղադրիչ 3-ի գործունեության շահառուները կլինեն Կոտայք, Լոռի, Տավուշ, Արագածոտն և Էջմիածին ու Երևան ՋՕԸ-ների ջրօգտագործողները՝ որոնք ոռոգման ջուր են ստանում հետևյալ մայր ջրանցքներից՝ 1) Կոտայքի ոռոգման ջրանցք՝ 2) Արզնի-Շամիրամ ոռոգման սխեմա՝ 3) Ստորին Հրազդանի ոռոգման սխեմա՝ 4) Դեբետավանի ոռոգման սխեմա և 5) Լոռու ոռոգման սխեմա:

Քաղաքական մակարդակի բարեփոխումները կներառեն ավելի մեծ քանակով շահակիրներ բոոր մակարդակներում՝ ապահովելու համար հիմնական գործընթացների ներառականությունը և դրանց կառավարումը լավ կառավարման սկզբունքներով՝ ներառյալ թափանցիկությունը և շահակիրների ներգրավումը: Տեղանքին բնորոշ ներդրումները (օրինակ՝ շինարարական աշխատանքներ) պետք է իրականացվեն հյուրընկալ համայնքների մասնակցությամբ՝ ազդեցությունների և մեղմացման միջոցառումների վերաբերյալ ազդակիր մարդկանց՝ այդ թվում խոցելի խմբերի տեսակետները հաշվի առնելու համար:

Ընդհանուր առմամբ ազդեցության ենթակա կողմերը կարող են լինել հետևյալը՝

Բացասական ազդեցության ենթակա կողմեր. Շահակիրներ, որոնք հնարավոր է բացասական ազդեցություն կրեն ծրագրի գործունեությունից՝

- Քաղաքական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ (օրինակ՝ սակագների և արդյունավետության միջոցառումներ). տնային տնտեսություններ՝ որոնք ստիպված կլինեն կրել ծառայությունների հասանելիության ավելի բարձր ծախսեր; ՋՕԸ-ները կարող են բախվել ջրի վճարների հավաքագրման դժվարություններին սակագների բարձրացման առաջին տարիներին։
- Տեղանքին բնորոշ ենթակառուցվածքային գործունեություն. ֆերմերներ և տնային տնտեսություններ՝ որոնց հողամասերը կարող են տուժել (մշտապես կամ ժամանակավորապես), կամ որոնց գյուղատնտեսական գործունեությունը կարող է ժամանակավորապես դադարեցվել շինարարական աշխատանքների և/կամ ծառայությունների ընդհատումների պատճառով։

Դրական ազդեցության ենթակա կողմեր. Շահակիրներ, որոնք կշահեն ծրագրի գործունեությունից՝

- Կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններ. ՏԿԵՆ-ի, ՋԿ-ի, ԾՀԹ-ի, մարզպետարանների և ՋՕԸ-ների հիմնական աշխատակիցները կանցնեն վերապատրաստումներ և կլոնենան կարիերայի զարգացման հնարավորություններ։
- Ինստիտուցիոնալ բարեփոխում և ուժեղացում. ՋԿ-ն, ջրառ իրականացնող ընկերությունները և ՋՕԸ-երը կշահեն ՇԵԿ ծախսերի վերականգնման բարելավումից՝ ջրի բաշխման և օգտագործման արդյունավետության միջոցով։
- ՋՋ ծառայությունների հասանելիություն. ՀՀ մարզերի բնակավայրեր, նպատակային տնային տնտեսություններ՝ որոնք ուղղակիորեն կշահեն ՋՋ ծառայությունների որակի բարելավումից։
- Ոռոգման ծառայությունների հասանելիություն. Կոտայք, Լոռի, Տավուշ, Արագածոտն, Էջմիածին ու Երևան ՋՕԸ-ների ֆերմերներ/անդամներ, որոնք կշահեն ավելի հուսալի ոռոգման ծառայություններից։

Աղյուսակ 2. ՋՈԾԲ ծրագրի հավանական ազդեցության ենթակա կողմեր

Շահակիրների տիպը	**Շահակիրների անվանումը**	**Հետաքրքրություն**	**Շահակիր խմբերի նկարագրություն**
Դրական ազդեցության ենթակա կողմեր	ՏԿԵՆ և ՋԿ	Ջրային ոլորտի բարեփոխում և ոռոգման ու գյուղական բնակավայրերում ՋՋ ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ հզորացում	Սրանք հիմնական շահակիրներն են, որոնք պատասխանատու են ջրային ոլորտի բարեփոխումների մշակման և իրականացման ու ազգային ջրային ռեսուրսների քաղաքականության հզորացման համար։ Վեջիններս պետք է ակտիվորեն ներգրավվեն այս գործունեության մեջ՝ բաղադրիչի գործունեությունը ուղղորդելու համար։

Շահակիրների տիպը	Շահակիրների անվանումը	Հետաքրքրություն	Շահակիր խմբերի նկարագրություն
	Մարզպետարաններ		Այս խումբը պատասխանատու է ջրային ոլորտի բարեփոխումների և ազգային ջրային ռեսուրսների քաղաքականության հզորացման իրականացման համար մարզային մակարդակում: Նրանց ներգրավումը և կարծիքների հավաքագրումը նախապատրաստման փուլում շատ կարևոր է:
	ՋՕԸ-ներ, ջրառ իրականացնող ընկերություններ և ջրօգտագործողներ		Այս խմբին կցուցաբերվի աջակցություն ոռոգման ոլորտի կառավարման և ծառայությունների մատուցման բարելավման առումով՝ ներառյալ սակագների և սուբսիդիաների բարեփոխումները, ինստիտուցիոնալ հզորացումը և վերահսկողության ու կառավարման գործիքների զարգացումը:
	ՀՀ մարզերում գտնվող բնակավայրեր, որոնք շահում են ՋՋ բարելավումներից		Համայնքներին կցուցաբերվի աջակցություն գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների (ՋՋ) ինստիտուցիոնալ հզորացման և կարողությունների զարգացման միջոցով՝ ապահովելով անվտանգ կառավարվող ջրամատակարարման ծառայություններ:
	ՏԿԵՆ, ՋԿ և ԾՀԹ	Տեխնիկական աջակցություն	Սա կաջակցի անհրաժեշտ տեխնիկական փորձագիտական ներուժի մոբիլիզացմանը, մշտադիտարկման և գնահատման գործունեության իրականացմանը՝ ապահովելու համար, որ Ծրագիրը համապատասխանի Բանկի բնապահպանական, սոցիալական, ֆիդուցիարային և տեխնիկական պահանջներին, ինչպես նաև զարգացնի

Շահակիրների տիպը	Շահակիրների անվանումը	Հետաքրքրություն	Շահակիր խմբերի նկարագրություն
			անձնակազմի կարողությունները՝ ծրագրի կառավարումը բարելավելու համար:
	ՀՀ մարզերում գտնվող բնակավայրեր, որոնք շահում են ՋՋ բարելավումներից Կոտայք, Լոռի, Տավուշ, Արագածոտն, Էջմիածին ու Երևան ՋՕԸ-ների ջրօգտագործողներ, որոնք ստանում ոռոգման ջուր 1) Կոտայքի ոռոգման ջրանցք Արզնի-Շամիրամի, Ստորին Հրազդանի, Կոտայքի, Լոռիի և Դեբետավանի մայր ջրանցքներից	Տեղանքին բնորոշ ենթակառուցվածքային գործողություններ	Ծրագիրը կնպաստի համայնքների սոցիալ-տնտեսական և գյուղատնտեսական զարգացմանը, որոնք ընդհանուր առմամբ կշահեն բարելավված ոռոգման ծառայություններից և անվտանգ ՋՋ ծառայություններից:
Բացասական ազդեցության ենթակա կողմեր	ԾԱԵԱ, տեղական բիզնեսներ		Կարող են լինել Ծրագրից տուժած անձինք, որոնց հողերը կամ գույքը կարող են տուժել: Նման դեպքերում կպատրաստվի Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ):
	Թիրախային խմբեր		Այս տարբեր խմբերի մարդիկ հիմնականում անտարբեր են նման Ծրագրերի նկատմամբ՝ հողի մշակման համար ռեսուրսների բացակայության պատճառով: Կարելի է կիրառել հատուկ մոտեցում՝ նրանց հետ երկխոսություն սկսելով և բովանդակալից խորհրդատվություն տրամադրելով:

2.3. Պոտենցիալ հետաքրքրված կողմեր

Ուղղակիորեն ազդեցության ենթակա համայնքներից և/կամ շահագրգիռ կողմերից բացի շահակիրները ներառում են նաև այլ կողմեր: Դրանք են.

- Պետական այլ գերատեսչություններ. Էկոնոմիկայի նախարարություն (պատասխանատու է գյուղատնտեսության հետ կապված քաղաքականության, կանոնակարգերի և ծրագրերի մշակման և իրականացման համար), Շրջակա միջավայրի նախարարություն (ձևակերպում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման հետ կապված քաղաքականություններ, կանոնակարգեր և ծրագրեր), Առողջապահության նախարարություն (վերահսկում է ջրի որակի, սանիտարական վիճակի և հիգիենայի հետ կապված հանրային առողջության մտահոգությունները):

- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և հասարակության կազմակերպություններ՝ որպես զարգացման գործընկերներ. CARD Հիմնադրամ, Երկրի ջրային գործընկերություն, Կայուն զարգացման նորարարական լուծումներ և այլն:

- Հետազոտական և գիտակրթական գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ. Ջրային համակարգերի շահագործման և սպասարկման տեխնիկական հանձնաժողով, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Երևանի պետական համալսարան, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, "Հայջրնախագիծ ինստիտուտ" և այլն:

Աղյուսակ 3. WISE ծրագրի այլ հետաքրքրված կողմեր

Շահագրգիռ Կողմերի Տեսակը	**Շահագրգիռ Կողմերի Անվանումը**	**Հետաքրքրությունը**	**Շահագրգիռ Կողմերի Խմբերի Նկարագրությունը**
Այլ հետաքրքրված կողմեր	Էկոնոմիկայի նախարարություն	Ջրային ոլորտի բարեփոխում և ոռոգման ու գյուղական բնակավայրերում ՋՋ ծառայությունների ինստիտուցիոնալ հզորացում	Այս նախարարությունը պատասխանատու է գյուղատնտեսության հետ կապված քաղաքականության, կանոնակարգերի և ծրագրերի մշակման և իրականացման համար
	Շրջակա միջավայրի նախարարություն		Այս նախարարությունը պատասխանատու է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման հետ կապված քաղաքականությունների,

Շահագրգիռ Կողմերի Տեսակը	Շահագրգիռ Կողմերի Անվանումը	Հետաքրքրությունը	Շահագրգիռ Կողմերի Խմբերի Նկարագրությունը
			կանոնակարգերի և ծրագրերի մշակման համար
	Առողջապահության Նախարարություն		Այս նախարարությունը պատասխանատու է ջրի որակի, սանիտարական վիճակի և հիգիենայի հետ կապված հանրային առողջության մտահոգությունների վերահսկման համար
	Հետազոտական գիտակրթական գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ		Այս խումբը կարող է աջակցող լինել և ունենալ իր արժեքավոր ներդրումը քաղաքականության և բարեփոխումների մշակման գործում
	ՀԿ/ՔՀԿ-ներ	Տեղանքին բնորոշ ենթակառուցվածքային գործողություններ	Այս խումբը խիստ մոտիվացված է և բաց է համագործակցության համար նոր հայեցակարգերի և գաղափարների շուրջ:

2.4. Անապահով կամ խոցելի խմբեր

Ծրագրի շրջանակներում խոցելի և/կամ անապահով խմբերը ներառում են մարդկանց, ովքեր հանգամանքների բերումով կարող են ենթակա լինել Ծրագրի գործողությունների անհամաչափ ազդեցությանը և/կամ ունեն Ծրագրից դուրս մնալու ավելի մեծ ռիսկ, քան այլ խմբերի ներկայացուցիչներ:

Այս խմբերը կարող են ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալով. տարեցներ հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց խնամակալները, կին գլխավորով տնային տնտեսություններ, փոքր հողագործներ, հողազուրկ ֆերմերներ, աղքատության շեմին ապրող ընտանիքներ, փախստականներ, և այլն:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Ծրագրի ազդակիր համայնքների խոցելի խմբերի բացահայտմանը և խորհրդատվությանը, անհրաժեշտության դեպքում: Բացի այդ, ծրագրի շրջանակներում պետք է ունենալ մոտեցումներ և/կամ ներկայացուցչական կազմակերպություններ, որոնց հետ համագործակցելով այս խմբերը կներգրավվեն ծրագրի իրականացման փուլի սկզբում: Ներգրավման եղանակների մանրամասները ներկայացված են հաջորդ բաժիններում:

3. ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

3.1. Ներգրավման եղանակները

Տարբեր խմբերի շահակիրների ներգրավման մեխանիզմները կներառեն, բայց չեն սահմանափակվի, հանրային խորհրդատվություններով, հարցազրույցներով և ֆոկուս խմբերի քննարկումներով, ներառյալ իրազեկումը, որպեսզի ստեղծվեն ապահով հարթակներ՝ մտահոգություններն արտահայտելու համար:

Թիրախային խմբերի համար հասանելի ձևաչափով և լեզվով համապատասխան տեղեկատվության նախապես հանրայնացումը կիրականացվի հանրային խորհրդատվությունների հարցազրույցների և/կամ ֆոկուս խմբերի հետ քննարկումներից առաջ: Դա կներառի նաև Արձագանքի և բողոքների լուծման մեխանիզմի (ԱԲԼՄ) հանրայնացումը:

Քաղաքականության և ռազմավարության մշակման ու բարեփոխումների գործունեության հետ կապված ներգրավումը կիրականացվի հանրային քննարկումների և խորհրդատվությունների գործընթացի, մասնավորապես՝ շահակիրների արձագանքը ստանալու համար նրանց ընդունումից առաջ: Ներգրավման մանրամասները հաջորդիվ մշակվում են՝ ըստ անհրաժեշտության:

Սքրինինգի ընթացքում կբացահայտվեն ազդակիր համայնքների խոցելի խմբերը, օրինակ՝ կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները, էթնիկ փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները և այլն: Այս խմբերը բովանդակալից խորհրդատվության կարիք ունեն: Շահակիրների բովանդակալից ներգրավումը կիրականացվի խորհրդատվությունների, համագործակցության և շահակիրների լիազորությունների ամրապնդման, ինչպես նաև երկկողմանի հաղորդակցության միջոցով: Այս խմբերի համար կպատրաստվեն և կտարածվեն հատուկ տեղեկատվական և հաղորդակցման նյութեր: Այս խմբերի ներկայացուցիչների կամ առանձին մարդկանց հետ կարող են կազմակերպվել ֆոկուս խմբային քննարկումներ, կլոր սեղանի քննարկումներ և առանձին հանդիպումներ՝ բացահայտելու իրենց կարծիքը Ծրագրի վերաբերյալ, մտահոգությունները և Ծրագրում ընդգրկվելու կարիքները: Մտահոգությունները և առաջարկությունները պետք է հնարավորինս հաշվի առնվեն մանրամասն նախագծերի մշակման ժամանակ և հետադարձ արձագանք տրամադրվի շահագրգիռ կողմերին:

Շահագրգիռ կողմերից ստացված կարծիքները և առաջարկությունները հաշվի կառնվեն և կարտացոլվեն Ծրագրի գործողություններում: Դրանք կգրանցվեն ԱԲԼՄ-ի ընթացակարգով, կքննարկվեն և հնարավորինս հաշվի կառնվեն, նույնիսկ եթե դրանք կարող են հանգեցնել նախագծի փոփոխության:

3.2. Տեղեկատվության հանրայնացում և հանրային քննարկում

2025 թվականի ապրիլի 15-ին Ջրային կոմիտեում կայացավ հանրային քննարկում՝ ԲՍՍ10-ի պահանջներին և Ծրագրի ՇՆՊ-ում նախատեսված ընթացակարգերին համապատասխան: Մասնակցության հրավեր էր ուղարկվել ազգային և մարզային մակարդակի շահագրգիռ կողմերին՝ ներառյալ համապատասխան պետական մարմինները և հասարակական հաստատությունները, հանդիպումից 8 օր առաջ, և տրամադրվել էր ՋՈԾԲ ծրագրի ԲԵՍ փաստաթղթերի նախնական տարբերակների հղումը: Վերջիններս Ջրային կոմիտեի կայքում հայերեն և անգլերեն լեզուներով

հրապարակվել էին 10 օր առաջ: Հանդիպման մասին տեղեկությունը նաև հրապարակվել էր սոցիալական ցանցերում (Ջրային կոմիտեի ֆեյսբուքյան էջում):

Հանդիպման նպատակն էր շահագրգիռ կողմերին ներկայացնել Համաշխարհային բանկի Ծրագիրը և ՇՆՊ նախագիծը ԲՍՀՊ, ԲՍԿՇ, ՏՇ և ԱԿԸ նախագծերի հետ միասին՝ ստանալու կարծիքներ և վարելու քննարկումներ յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ:

Ներկայացումները ընդգրկում էին հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը, առաջարկվող մեղմացման միջոցառումները, շահակիրների նույնականացումը, ներգրավման գործունեությունը և մեթոդները, տարաբնակեցման ռիսկերն ու ազդեցությունները, ազդակիր անձանց իրավունքներն ու իրավասություններն, ինչպես նաև աշխատանքի անվտանգության և առողջության ռիսկերը և դրանց մեղմացման միջոցառումները, ԲԵՍ փաստաթղթերի ինտեգրումը մրցութային փաթեթներում, Ծրագրի գործողությունների վերահսկումը և մշտադիտարկումը՝ ՀԲ-ի ԲՍՍ-ների և ազգային օրենքներին համապատասխան:

Հանդիպման ընթացքում մասնակիցները ներկայացրին մի շարք առաջարկություններ մշակված փաստաթղթերի հետագա իրականացման և դրանցում նշված միջոցառումների վերաբերյալ, մասնավորապես՝

- ԾԻԹ-ի ավելի սերտ համագործակցություն մարզպետարանների հետ մինչ նախագծային փուլում,
- ԱԱԱ մասնագետի ներգրավում ԾԻԹ-ում նախագծման փուլին սկզբից (ԱԱՏՄ),
- Շինարարության պայմանագրերում ներառել, որը նախատեսում է աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերի ստորագրում՝ ծառայության մատուցման պայմանագրերի փոխարեն, ապահովելով աշխատողների բոլոր իրավունքներն ու առավելությունները (ԱԱՏՄ),
- Տարածքի սեփականության իրավունքի վավերացում համայնքներում, քանի որ Կադաստրային քարտեզները երբեմն անճշգրիտ են (Լոռու մարզպետարան),
- Անհրաժեշտություն առանձին հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու յուրաքանչյուր ոլորտի համար՝ շահագրգիռ կողմերին հնարավորություն տալու՝
    - հասկանալ, թե ինչպես են կարգավորվելու ծրագրի կառավարման ընթացակարգային հարցերը և արդյոք նախատեսվում է ընդհանուր ոռոգման պլան ամբողջ երկրի մակարդակով, ինչը լայնածավալ և ներդրումատար գործընթաց է,
    - բարձրաձայնել տեխնիկական խնդիրները և ներկայացնելու առաջարկություններ («Ջրառ» ՓԲԸ):

Շահագրգիռ կողմերը տեղեկացան, որ նրանց կարծիքները կքննարկվեն և անհրաժեշտության դեպքում կինտեգրվեն վերջնական ԲԵՍ փաստաթղթերում: Հանդիպման արձանագրությունը ներկայացված է Հավելված 4-ում:

Լրացուցիչ հանրային քննարկումներ կկազմակերպվեն թիրախային մարզերում՝ ԲՍՍ10 պահանջներին, ՀՀ համապատասխան օրենսդրությանը և Ծրագրի ՇՆՊ-ին համապատասխան:

3.3. Հանրային քննարկումների և խորհրդատվությունների ազգային պահանջները

Ծրագրի բաղադրիչ 1-ը ներառում է համախմբված Ազգային Ջրի ռազմավարության, Ազգային ոռոգման ռազմավարության, Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ռազմավարության և Ազգային ոռոգման գլխավոր հատակագծի մշակում, ինչպես նաև ջրային ոլորտի կարևոր օրենսդրության վերանայում, ներառյալ Ջրային օրենսգիրքը, ոռոգման նորմերը և ՋՕԸ-երի մասին օրենքը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը և ՀՀ Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշումը «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին», որն ընդունվել է այս օրենքի համաձայն, սահմանում է պարտադիր հանրային քննարկումներ մեծ նշանակություն ունեցող իրավական ակտերի նախագծերի շուրջ ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակում: Հանրային քննարկումների տևողությունը կազմում է առնվազն 15 օր, և բոլոր նախագծերը հրապարակվում են միասնական կառավարման կայքում (www.e-draft.am), որտեղ յուրաքանչյուր ոք կարող է ներկայացնել իր կարծիքը, առաջարկություններ կամ փոփոխություններ ներկայացնելու միջոցով, ինչպես նաև քվեարկել առաջարկվող տեքստի օգտին կամ դեմ:

Ռազմավարական նշանակության փաստաթղթերը ենթակա են ռազմավարական բնապահպանական գնահատման (ՌԲԳ) և պետք է հրապարակվեն ՀՀ Կառավարության N 1325-Ն որոշմանը համապատասխան՝ Հանրային ծանուցման և քննարկման կարգի մասին (2014, վերջին փոփոխությունը՝ 2023 թվականին): Այս կարգը կարգավորում է հասարակական իրազեկման, քննարկումների և լսումների ընթացակարգին առնչվող հարաբերությունները՝ հայեցակարգային փաստաթղթի և պլանավորված գործունեության բոլոր կատեգորիաների ռազմավարական բնապահպանական ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում:

Խորհրդատվության ժամանակահատվածի ավարտից հետո պատասխանատու մարմինը հավաքում և վերլուծում է ստացված բոլոր արձագանքները և պատրաստում է առաջարկությունների ամփոփագիր: Այնուհետև ռազմավարության նախագիծը համապատասխանաբար ճշգրտվում է՝ ներառելով համապատասխան առաջարկները: Վերանայված տարբերակը՝ հանրային կարծիքների ամփոփագրի հետ միասին, հրապարակայնորեն հասանելի է դառնում ինչպես e-draft.am հարթակում, այնպես էլ օրենսդրություն առաջարկող հաստատության պաշտոնական կայքում:

Ստացված առաջարկությունների վերլուծության և ամփոփագրի հիման վրա հանրային խորհրդատվություն իրականացնող մարմինը կատարում է անհրաժեշտ ճշգրտումներ նախագծում: Հանրային խորհրդատվությունների կազմակերպման և անցկացման կարգի համաձայն՝ վերանայված նախագծերը և բոլոր հանրային խորհրդատվությունների ամփոփագիրը պետք է հասանելի լինեն e-draft կայքում և օրենսդրություն առաջարկող հաստատության կայքում: Բաղադրիչ 1-ի շրջանակներում քաղաքական և ինստիտուցիոնալ բարեփոխումները կհետևեն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին և կհրապարակվեն ու կխորհրդակցվեն e-draft.am կայքում:

3.4. Շահակիրների ներգրավման գործունեության ամփոփում ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում

Ծրագիրը ձգտում է խթանել բովանդակալից խորհրդատվություններ վերը նշված բաժնում բացահայտված շահագրգիռ կողմերի հետ, հատկապես նրանց հետ, որոնք կարող են բացասական

ազդեցություն կրել, որպեսզի ապահովվի հնարավոր ազդեցությունների կանխումը և/կամ մեղմացումը մասնակցային և ներառական գործընթացի միջոցով: Ստորև ներկայացվում է նախապատրաստման համար ձեռնարկված ներգրավվածությունը և Ծրագրի իրականացմանն աջակցելու համար պլանավորված գործունեությունը:

Հիմնվելով այս բացահայտման վրա՝ ԾՀԹ-ը հետագայում կբացահայտի անհատներին կամ խմբերին, որոնք կարող են ունենալ տարբեր մտահոգություններ և առաջնահերթություններ ծրագրի ազդեցությունների, մեղմացման մեխանիզմների և օգուտների վերաբերյալ, և որոնք կարող են պահանջել ներգրավման տարբեր կամ առանձին ձևեր և հաղորդակցման տարբեր մեթոդներ:

Բանկի կողմից այս ՇՆՊ-ը վերջնական տեսքի բերելուց և հաստատելուց հետո այն կթարմացվի երկու տարին մեկ՝ արտացոլելու համար Ծրագրի և շահակիրների հնարավոր փոփոխությունները՝ իրենց հետաքրքրություններով և ազդեցություններով հանդերձ:

Այս ՇՆՊ-ը մշակվել է Ծրագրի բնույթին և մասշտաբին, ինչպես նաև վերջինիս հնարավոր ռիսկերին և ազդեցություններին համաչափ : ՇՆՊ-ի նախնական տարբերակը հնարավորինս շուտ կհանրայնացվի ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով, և մինչև ծրագրի գնահատումը՝ ՇՆՊ-ի վերաբերյալ շահագրգիռ կողմերի կարծիքները հավաքելու համար, ներառյալ շահագրգիռ կողմերի բացահայտման և հետագա ներգրավման համար առաջարկությունների վերաբերյալ: Եթե ՇՆՊ-ում կատարվեն զգալի փոփոխություններ, ապա թարմացված ՇՆՊ-ը կհանրայնացվի:

3.5. Շահագրգիռ Կողմերի Ներգրավումը Նախագծի Իրականացման Ընթացքում

Ջրօգտագործող ընկերությունները (ՋՕԸ) կարևոր դեր ունեն շահակիրների ներգրավման ընդհանուր գործունեության մեջ: ՋՕԸ-ները սահմանել են ներքին բողոքների լուծման ընթացակարգեր և ունեն թեժ գծեր ջրօգտագործողների հետ հետադարձ կապի համար: Նրանք կարող են ծառայել նաև որպես տեղական բողոքների կենտրոններ շինարարական աշխատանքների ընթացքում: Որոշ ՋՕԸ-եր ունեն սոցիալական մեդիայի հատուկ էջեր, խմբեր կամ կայքեր, որոնք կարող են օգտագործվել շահագրգիռ կողմերի ներգրավման և տեղեկատվության հանրայնացման նպատակներով՝ Ծրագրի շահառուների հետ կապը պահպանելու համար:

Ծրագիրն իր իրականացման ընթացքում կիրականացնի ներգրավման հետևյալ գործողությունները.

Աղյուսակ 4. Շահակիրների ներգրավման պլանավորված գործողություններ

Ծրագրի փուլը	Ժամանակահատվածը	Թեմա	Մոտեցում/Մեթոդ	Թիրախային Շահակիրներ	Պարտականություններ
Նախագծման փուլ	Նախագծի պատրաստման ժամանակահատվածում	Բաղադրիչ 1. Ջրային ոլորտի բարեփոխում և ինստիտուցիոնալ զարգացում	- Կլոր սեղանի քննարկումներ, - Աշխատանքային խմբերի քննարկումներ - Ֆորումներ սոցիալական մեդիայում - Հանրային հանդիպումներ - Նախագծի հանրայնացում (i) ջրային ոլորտի համապարփակ ազգային ռազմավարություն, (ii) տասնամյա ազգային ոռոգման ինքնուրույն ռազմավարություն, (iii) խմելու ջրի և ջրահեռացման ռազմավարություն, և (iv) ոռոգման գլխավոր հատակագիծ e-draft-ում և ՇՀԹ-ի կայք հանրության արձագանքների համար	ՏԿԵՆ, Ջրային կոմիտե, Պետական գերատեսչություններ, մարզպետարաններ, ՏԻՄ-եր, ՔՀԿ-ներ, ՀԿ-ներ, ՋՕԸ-ներ, ջրառ իրականացնող ընկերություններ	Ծրագրի ղեկավար, Ծրագրի համակարգող, Խորհրդատվական ընկերություններ կամ Անհատ խորհրդատուներ, ՇՀԹ-ի Բ&Ս թիմ, համայնքի հետ կապի պատասխանատու
		Բաղադրիչ 2. Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	- Աշխատանքային քննարկումներ Վեոլիայի, Ջրառի և ՋՕԸ-ների հետ - ՇՀ հանդիպումներ՝ ԲՄԿՊ-ները, ՇՄՄԱԳ-ները և	Ջրային կոմիտե, ՏԻՄ-եր, Վեոլիա Ջուր ՓԲԸ, ազդակիր համայնքներ, տնային տնտեսություններ	Ծրագրի ղեկավար, Ծրագրի համակարգող, ՇՀԹ-ի Բ&Ս թիմեր, Նախագծման խորհրդատու, համայնքի հետ կապի պատասխանատու

Ծրագրի փուլը	Ժամանակահատվածը	Թեմա	Մոտեցում/Մեթոդ	Թիրախային Շահակիրներ	Պարտականություններ
		Բաղադրիչ 3. Ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում	ՏՊ-ները ներկայացնելու համար, եթե առկա են - Բովանդակալից խորհրդատվություններ ՇԱԵԱ -ների հետ - Սոցիալական մեդիա - Facebook, - Գրավոր տեղեկատվության տարածում - բրոշյուրներ, պաստառներ, թռուցիկներ, կայք	Ջրային կոմիտե, ՏԻՄ-եր, Ջրառ ՓԲԸ, ՋՕԸ-ներ, համայնքներ, ֆերմերներ	Ծրագրի ղեկավար, ծրագրի համակարգող, ՇՀԹ-ի Բ&Ս թիմեր, Նախագծման խորհրդատու, Համայնքի հետ կապի պատասխանատու
		Հարմարեցված մոտեցում խոցելի խմբերի համար	- Առանձին հանդիպումներ կանանց և խոցելի խմբերի համար; - Բովանդակալից խորհրդատվություններ - Գրավոր տեղեկատվության տարածում - բրոշյուրներ, պաստառներ, թռուցիկներ, կայք	- Կին գլխավորող տնային տնտեսություններ, - Երեխա գլխավորող տնային տնտեսություններ, - Հաշմանդամություն ունեցող անձինք, - Էթնիկ փոքրամասնություններ, - փախստականներ	Ծրագրի ղեկավար, Ծրագրի համակարգող, ՇՀԹ-ի Բ&Ս թիմեր, Նախագծման խորհրդատու, Համայնքի հետ կապի պատասխանատու
Շինարարական աշխատանքներ	Շինարարական աշխատանքների ամբողջ	Գյուղական բնակավայրերում ջրամատակարա	- Հանրային ծանուցման հանդիպումներ, - Տեղեկատվական	- Ազդակիր համայնքներ; - ԱԱ-ներ (առկայության	Ծրագրի ղեկավար, Ծրագրի համակարգող, ՇՀԹ-ի Բ&Ս թիմեր,

Ծրագրի փուլը	Ժամանակահատվածը	Թեմա	Մոտեցում/Մեթոդ	Թիրախային Շահակիրներ	Պարտականություններ
	ժամանակահատվածում	ման և ջրահեռացման բարելավում, ոռոգման ենթակառուցված քների արդիականացում և համակարգի բարելավում	վահանակներ, - Գրավոր տեղեկատվության տարածում - բրոշյուրներ, պաստառներ, թռուցիկներ, կայք, սոցիալական մեդիա	դեպքում); - Տարածքում գտնվող ձեռնարկություններ; - Նախագծի տարածքում բնակվող մարդիկ; - Ժամանակավոր զբաղվածության հնարավորությունների մասին իրազեկված խոցելի տնային տնտեսություններ	Շինարարական կապալառուի և Տեխնիկական վերահսկողության խորհրդատուի, Համայնքի հետ կապի պատասխանատու
		Հարմարեցված մոտեցում խոցելի խմբերի համար	- Առանձին հանդիպումներ՝ ժամանակավոր զբաղվածության հնարավորությունները ներկայացնելու համար	- Կին գլխավորող տնային տնտեսություններ, - Երեխա գլխավորող տնային տնտեսություններ, - Հաշմանդամություն ունեցող անձինք, - Էթնիկ փոքրամասնություններ, - փախստականներ	Ծրագրի ղեկավար, Ծրագրի համակարգող, ՇՀԹ-ի Բ&Ս թիմեր, Շինարարական կապալառուի և Տեխնիկական վերահսկողության խորհրդատուի, Համայնքի հետ կապի պատասխանատու
Շահագործման փուլ	Շահագործման վաղ փուլում	Գյուղական բնակավայրերում	- Արձագանքների մոնիտորինգ - Առանձին	- Ազդակիր համայնքներ; - ՇԱԵԱ -ներ	Ծրագրի ղեկավար, Ծրագրի համակարգող,

Ծրագրի փուլը	Ժամանակահատվածը	Թեմա	Մոտեցում/Մեթոդ	Թիրախային Շահակիրներ	Պարտականություններ
		ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում, ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում	հանդիպումներ կանանց և խոցելի խմբերի համար;	(եթե կան); - Տարածքում գտնվող ձեռնարկություններ; - Նախագծի տարածքում բնակվող մարդիկ	ՇՀԹ-ի Բ&Ս թիմեր, Շինարարական կապալառուի և Տեխնիկական վերահսկողության խորհրդատուի, Համայնքի հետ կապի պատասխանատու
		Հարմարեցված մոտեցում խոցելի խմբերի համար		- Կին գլխավորող տնային տնտեսություններ, - Երեխա գլխավորող տնային տնտեսություններ, - Հաշմանդամություն ունեցող անձինք, - Էթնիկ փոքրամասնություններ, - Փախստականներ	

3.6. Հաշվետվողականությունը շահակիրներին

Շահակիրները պարբերաբար կտեղեկացվեն նախագծի մշակմանը զուգահեռ՝ ներառյալ ծրագրի բնապահպանական և սոցիալական գործունեության և շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի ու ԱԲԼՄ-ի իրականացման, ինչպես նաև ծրագրի ընդհանուր իրականացման առաջընթացի մասին հաշվետվությունները:

ԲՍԿՊ-ի հանրայնացումից և շինարարական աշխատանքների մեկնարկից հետո շահակիրներին տեղեկացնելու նպատակով Կապալառուների և Տեխնիկական վերահսկողության խորհրդատուների կողմից Պատվիրատուի համակարգման ներքո կիրականացվեն հետևյալ գործողությունները՝.

- Հանրային ծանուցման հանդիպումներ

- Տեղեկատվական վահանակներ
- Գրավոր տեղեկատվության տարածում՝ բրոշյուրներ, պաստառներ, թռուցիկներ, կայք, սոցիալական մեդիա
- Առանձին հանդիպումներ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ՝ ժամանակավոր զբաղվածության հնարավորությունները ներկայացնելու համար:

Շահագործման ժամանակահատվածում.

- Արձագանքների մոնիտորինգ
- Առանձին հանդիպումներ կանանց և խոցելի խմբերի հետ՝ նրանց իրազեկելու Ծրագրի արդյունքների մասին՝ Ծրագրում ներգրավվելու միջոցով:

3.7. Միջոցներ և պատասխանատվություն

3.7.1. Կառավարման գործառույթներ և պատասխանատվություն

Բաղադրիչ 4-ը կֆինանսավորի Ծրագրի իրականացման կառուցվածքը, որը պատասխանատու կլինի Ծրագրի կառավարման համար՝ այդ թվում՝ Ծրագրի իրականացման համակարգումն ու տեխնիկական վերահսկողությունը, ֆինանսական կառավարումը (ՖԿ), գնումների գործընթացը, մոնիտորինգն ու գնահատումը (Մ&Գ), սոցիալական և բնապահպանական չափանիշների կառավարումն ու վերահսկողությունը՝ ներառյալ գենդերային ուղղվածություն ունեցող գործունեությունը, հաղորդակցություններն ու իրազեկումը և առաջընթացի մասին հաշվետվությունների ներկայացումը:

ՋԿ-ն՝ ԾՀԹ-ի միջոցով, պատասխանատու կլինի Նախագծի գործունեության իրականացման համար՝ ներառյալ ՇՆՊ-ի իրականացումը: ՇՆՊ-ի իրականացումը ներառում է համագործակցություն բազմաթիվ մասնագետների միջև՝ ապահովելու համար, որ ծրագրի ՇՆ բոլոր կողմերին պատշաճ կերպով անդրադարձ կատարվի:

ԾՀԹ-ն կունենա բնապահպանական և սոցիալական մասնագետների թիմ՝ լիազորված ապահովելու ծրագրի իրականացումը՝ բոլոր բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխան: Սոցիալական մասնագետը, ԾՀԹ-ի աջակցությամբ, պատասխանատու կլինի ՇՆՊ-ի իրականացման համար, ինչպես վերևում մանրամասն նկարագրված է ՇՆՊ-ի գործողությունների աղյուսակում (Աղյուսակ 4), և պետք է համապատասխանի այս փաստաթղթում նշված ժամկետներին: Սոցիալական հարցերով մասնագետը կունենա ընդհանուր պատասխանատվություն ՇՆՊ-ն թարմացնելու, ընդունելու և իրականացնելու համար՝ ներառյալ ներգրավման տարբեր մեխանիզմները, դրանց ժամանակացույցերը, դերերն ու պատասխանատվությունները և ՇՆՊ-ի գործունեության իրականացման համար հատկացված միջոցները:

Սոցիալական հարցերով մասնագետը կհամակարգի ՋՕԸ-ների և տեղական համայնքների հետ աշխատանքը՝ ապահովելու բովանդակալից խորհրդատվություններ և կազմակերպելու հանրային խորհրդատվությունների հանդիպումներ: ՇՆՊ-ի իրականացման մեջ ներգրավված այլ մասնագետներ կներառեն Բնապահպանական մասնագետը, Մ&Գ մասնագետը և տեխնիկական մասնագետները: Բնապահպանական մասնագետը կօգնի Սոցիալական մասնագետին կազմակերպել և անցկացնել հանրային խորհրդակցություններ, որտեղ միաժամանակ կարող են լուծվել ինչպես բնապահպանական, այնպես էլ սոցիալական մտահոգությունները: Մ&Գ մասնագետը կաջակցի Սոցիալական մասնագետին՝ մշակելով և իրականացնելով մոնիտորինգի շրջանակ՝ ՇՆՊ-ի գործունեության արդյունքներն ու ազդեցությունները հետևելու համար: Մ&Գ

մասնագետը կնպաստի ՇՆՊ-ի գործունեության վերաբերյալ պարբերական հաշվետվությունների ներկայացմանը՝ ընդգծելով այն ոլորտները, որտեղ սոցիալական ներգրավվածությունը հաջողությամբ է ընթանում, և բացահայտելով բարելավման ոլորտները: Տեխնիկական մասնագետները (ինժեներներ, վերահսկիչներ) կօգնեն բացատրել նախագծի տեխնիկական կողմերը շահագրգիռ կողմերին խորհրդակցությունների ժամանակ՝ ապահովելով, որ համայնքները հասկանան, թե ինչպես նախագիծը կարող է ազդել իրենց շրջակա միջավայրի և սոցիալական կյանքի վրա:

Նախագիծը նաև պայմանագիր կկնքի Համայնքային Կապի Պատասխանատուների (ՀԿՊ) հետ՝ թիրախային մարզերում աշխատելու համար: Այս ՀԿՊ-ները կաջակցեն ՇՆՊ-ի գործունեության իրականացմանը՝ հաշվետվություններ ներկայացնելով Սոցիալական Մասնագետին և ԾՀԹ-ի շրջանակներում Բ&Ս ավելի լայն թիմին:

3.7.2. Միջոցներ

ՇՆՊ-ի իրականացման համար միջոցների պահանջները, որպես կանոն, բաշխվում են հիմնական ոլորտներին, ինչպիսիք են անձնակազմը, հաղորդակցման արշավները, կարողությունների զարգացումը, ԲԼՄ-ի իրականացումը և այլ կարևոր գործողություններ՝ շահակիրների արդյունավետ ներգրավումը և ծրագրի հաղորդակցությունն ապահովելու համար: ՇՆՊ-ի բյուջեն ներկայացված է Հավելված 3-ում:

4. ԱՐՁԱԳԱՆՔ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

4.1. Արձագանքի և բողոքների լուծման մեխանիզմի նպատակը

Արձագանքի և բողոքների լուծման մեխանիզմը (ԱԲԼՄ) կստեղծվի և կպահպանվի Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում: ԱԲԼՄ-ը կապահովի, որ քաղաքացիները կարողանան հարցումներ և բողոքներ ներկայացնել, ինչպես նաև ժամանակին և արդյունավետ կերպով լուծել իրենց բողոքները՝ առանց դատարան դիմելու անհրաժեշտության:

ԱԲԼՄ-ը ապահովում է թափանցիկ և վստահելի գործընթաց արդար, արդյունավետ և երկարատև արդյունքների համար: Այն նաև կառուցում է վստահություն և համագործակցություն, որոնք կարևոր բաղադրիչ են լայնածավալ համայնքային քննարկումների, որոնք հեշտացնում են կարգավորիչ գործողությունները:

ԱԲԼՄ-ն անդրադառնում է ազդակիր համայնքներից և արտաքին շահագրգիռ կողմերից եկող բողոքներին, որոնք առաջանում են Ծրագրի Բաղադրիչ 2 և 3-ի շրջանակներում, ԾՀԹ-ի կամ Կապալառուների/ենթակապալառուների գործողությունների հետևանքով: Առանձին մեխանիզմ է մշակվել աշխատողների բողոքները լուծելու համար: Գործընթացը նկարագրված է ԱԿԸ-ում: ԾՀԹ-ը պատասխանատու է ԱԲԼՄ-ի կառավարման համար, սակայն Ծրագրի վերաբերյալ բողոքներից շատերը, ամենայն հավանականությամբ, կապված կլինեն Կապալառուների գործողությունների հետ և, հետևաբար, պետք է լուծվեն նրանց կողմից: Տեխնիկական վերահսկողության խորհրդատուի աջակցությամբ ԾՀԹ-ը կվարի ԱԲԼՄ-ը՝ դիտարկելով և որոշելով բողոքի լուծման պատասխանատու կողմին և բողոքը լուծելու լավագույն գործողությունները կամ միջոցառումները: Խորհրդատուն կաջակցի ԾՀԹ -ին՝ մշտադիտարկելու բողոքների լուծումը՝ ձեռնարկված ԾՀԹ-ի կամ Կապալառուի կողմից:

Ծրագրի ԱԲԼՄ-ն անդրադառնում է նաև տարաբնակեցման խնդիրներին՝ հողի և այլ ակտիվների ձեռքբերում (օրինակ՝ փոխհատուցման չափ, հողամասերի համապատասխանություն, մոտեցնող/մուտքային ճանապարհների և բիզնեսի կորուստ և այլն), ինչպես նաև շինարարության և/կամ վերականգնման հետևանքով առաջացած կորուստներին և վնասներին: Հետևաբար, ԱԲԼՄ-ը մանրամասն նկարագրված է նաև Տարաբնակեցման շրջանակում:

ԱԲԼՄ-ը գործիք է, որի միջոցով

- Ազդեցության ենթարկված մարդիկ կարող են բողոք ներկայացնել կամ լուծել ցանկացած վեճ, որը կարող է ծագել Ծրագրի իրականացման ընթացքում,
- ԾՀԹ-ը երաշխավորում է, որ համապատասխան և փոխադարձաբար ընդունելի բողոքների լուծման գործողությունները ուսումնասիրվեն և իրականացվեն՝ ի բավարարում բողոքներ ներկայացնողների,
- ԾՀԹ-ը աջակցում է բողոքների քննարկման մատչելիությանը և թափանցիկությանը,
- ԾՀԹ-ը կառավարում է ժամանակի գործոնը (խուսափում է դատական վարույթների դիմելու անհրաժեշտությունից (առնվազն սկզբում):

Բաղադրիչ 2ին և 3ին բնորոշ բողոքները կարող են վերաբերել հետևյալ իրավիճակներին՝

- Հողի ձեռքբերում և ֆիզիկական տարհանում,

- Շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած վնասներ,

- Շրջակա միջավայրի վրա ազդեցություն, և

- Ուղղակի և/կամ անուղղակի սոցիալ-տնտեսական ազդեցություններ:

Արդյունավետ ԱԲԼՄ -ների ուղղորդող սկզբունքները ներառում են հետևյալ հիմնական սկզբունքները.

Գաղտնիություն և Անանունություն.

- Ունենալ բազմաթիվ ուղիներ, որոնց միջոցով կարող են գրանցվել բողոքները:
- Թույլ տալ անվտանգ և գաղտնի հաղորդում. տուժածները պետք է կարողանան հայտնել սեռական շահագործման և չարաշահման (ՍՇՉ) և սեռական ոտնձգությունների (ՍՈ) (ՍՇՉ/ՍՈ) մասին՝ առանց հրապարակայնորեն բացահայտվելու:
- Պահել բողոք ներկայացնողների մասին տեղեկատվության գաղտնիությունը:
- Գրանցել դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը բողոք ներկայացնողի մատյանում և պահել փակ պահարանում՝ փաստաթղթավորելով միայն միջադեպի մասին սահմանափակ անանուն տեղեկություններ:

Տուժածի նկատմամբ կենտրոնացված մոտեցում և Անվտանգության ապահովում

- Աջակցել ՍՇՉ/ՍՈ-ից տուժածի համար աջակցող, արժանապատիվ և պաշտպանիչ միջավայրի ստեղծելուն, ինչպես նաև նրա իրավունքների, ցանկությունների և ընտրությունների լիակատար հարգելուն:
- Հիմնվել տուժածի տեղեկացված համաձայնության վրա, որը պետք է երաշխավորվի ողջ ԱԲԼՄ-ի ընթացքում:
- Պահպանել գաղտնիությունն ու անանունությունը որպես տուժածների անվտանգության երաշխավորման հիմնարար միջոց. տուժածների գործերը չպետք է քննարկվեն որևէ մեկի հետ:
- Առաջնահերթություն տալ տուժածի անվտանգությանը:
- Գործի վերաբերյալ հետադարձ կապ տրամադրել միայն տուժածին և մեծ զգուշություն ցուցաբերել մինչև տուժածին որևէ արդյունք հաղորդելը:

4.2. Բողոքների ներկայացում և լուծում

ԱԲԼՄ-ն կներառի հետևյալ քայլերը՝

Քայլ 1. Բողոքների ներկայացում գրավոր՝ հեռախոսային թեժ գծի/բջջային հեռախոսի, փոստի, սոցիալական մեդիայի (FB և այլն), վեբ կայքի և բողոքների գրանցամատյանի միջոցով՝ կապալառու կազմակերպության միջոցով և/կամ անմիջապես ԾՀԹ-ին: ԱԲԼՄ-ն նաև թույլ կտա անանուն բողոքները բարձրաձայնել և լուծել:

Քայլ 2. Բողոքի գրանցում, բողոքների տիպաբանության հիման վրա բողոքների դասակարգում և բողոքողներին՝ ավելի արդյունավետ պատասխան տալու համար և հնարավորինս անհապաղ նախնական պատասխանի տրամադրում: Տիպաբանությունը հիմնված կլինի բողոք ներկայացնողի բնութագրերի (օրինակ՝ խոցելի խմբեր, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն) և բողոքի բնույթի վրա :

Բողոքի համակարգող (փուլ 1)

ԱԲԼՄ-ի 1-ին փուլը ներառում է բողոքի գրանցումը (գրավոր կամ բանավոր) ԱԲԼՄ-ի մատյանում, որը կպատրաստվի և կտրամադրվի համայնքներին և կապալառուներին: Բողոքները կարձանագրվեն համայնքի մակարդակով բողոքների համակարգողի և Կապալառուի կողմից շինարարական հրապարակում նշանակված համապատասխան պատասխանատուի կողմից:

Բողոքը գրանցելուց հետո այն անմիջապես կլուծվի համայնքապետարանի կամ Կապալառուի կողմից, եթե հնարավոր է: Եթե բողոքը մանրամասն ուսումնասիրության կարիք ունի, և այն չի կարող անմիջապես լուծվել, ԱԵԱ-ն տեղեկացվում է 2-րդ փուլի բողոքների լուծման ընթացակարգերի մասին: ԱԵԱ-ն իրավունք ունի օգտագործել 2-րդ փուլի ընթացակարգերը՝ առանց դիմելու 1-ին փուլի ընթացակարգերին: 1-ին փուլի բողոքը լուծելու ժամկետը 7 օր է:

Հնարավորության դեպքում դժգոհությունները կլուծվեն տեղական մակարդակով: Այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, դրանք կուղարկվեն Ծրագրի մակարդակով ստեղծված Բողոքների Հանձնաժողովին: Բողոքները և դրանց լուծումը կարձանագրվեն և կլուծվեն համապատասխան ժամկետում՝ ոչ ավելի, քան 2 շաբաթ:

Բողոքների լուծում ծրագրի մակարդակով (փուլ 2)

Այս փուլում բողոքը կվերանայվի ԾՀԹ մակարդակով: 1-ին փուլում չլուծված բողոքները, բողոքը ներկայացնողի համաձայնությամբ, գրավոր կուղարկվեն ԾՀԹ: Նմանապես, տուժող բողոք ներկայացնողները/ԱԵԱ-ները, ովքեր դժգոհ են բողոքի լուծման 1-ին փուլից, կարող են իրենց բողոքները ներկայացնել ԾՀԹ: Համայնքի տեղական համակարգողը կօգնի նրանց պաշտոնական բողոք ներկայացնելու հարցում:

ԾՀԹ-ի ԱԲԼՄ համակարգողը կուսումնասիրի ԱԵԱ-ների գրավոր բողոքները, որոնք չեն բավարարվել 1-ին փուլում և դրանք ներքին կարգով կուղարկի համապատասխան բաժիններ՝ շտկելու համար: Ուղղորդման ժամկետը 10 օր է: Որոշման մասին բողոք ներկայացնողը տեղեկացվում է առավելագույնը 30 օրվա ընթացքում:

4.3. Բողոքների փակումը

Բողոքը կհամարվի «լուծված» կամ «փակված», երբ ձեռք է բերվել երկու կողմերի համար բավարար լուծում և ուղղիչ միջոցառումների հաջող իրականացումից հետո: Երբ առաջարկվող լուծումը համաձայնեցվում է Ծրագրի և բողոք ներկայացնողի միջև, դրա իրականացման համար անհրաժեշտ ժամանակը կախված կլինի լուծման բնույթից: Այնուամենայնիվ, այս գործողությունները կիրականացվեն բողոքի գրանցումից հետո մեկ ամսվա ընթացքում և կվերահսկվեն մինչև ավարտը: Բողոքի լուծումից հետո և բողոքը ներկայացնողի հետ համաձայնեցնելուց հետո, բողոքի կարգավիճակը ԱԲԼՄ մատյանում կնշվի որպես «Փակ»: ԱԲԼՄ մատյանը կներկայացվի Համաշխարհային բանկի թիմին:

Այնուամենայնիվ, որոշակի իրավիճակներում Ծրագիրը կարող է «փակել» բողոքը, նույնիսկ եթե բողոք ներկայացնողը գոհ չէ արդյունքից: Օրինակ, եթե բողոքը վերաբերում է նախագծի տեխնիկական լուծումներին, և այն չի կարող փոփոխվել, կամ բողոքը հիմնավորում չունի և պարունակում է սխալ տեղեկատվություն կամ տվյալներ: Բողոքի կարգավիճակն այս դեպքում կլինի «Մերժված»: Որոշման մասին բողոքատուն կտեղեկացվի բողոքի գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

4.4. Բողոքների գրանցում եւ փաստաթղթավորում

ԾՀԹ-ն կառաջարկի տեղական համակարգող՝ կառավարելու բողոքների մատյանը՝ բոլոր ստացված բողոքները գրանցելու համար: Գրանցամատյանը կպարունակի այն անհատի կամ կազմակերպության անունը, որը բողոք է ներկայացնում, բողոքի ամսաթիվը և բնույթը, ձեռնարկված ցանկացած հետագա գործողություն, Կապալառուի կամ այլ համապատասխան

կողմից իրականացված լուծումներն ու ուղղիչ գործողությունները, բողոքի վերջնական արդյունքը կամ կարգավիճակը:

Վերահսկող ու շինարարական ընկերությունները իրենց ամսական մշտադիտարկման հաշվետվություններում տեղեկատվություն կտրամադրեն բողոքների կառավարման վերաբերյալ: Բողոքների մշտադիտարկումը և հաշվետվությունները կներկայացվեն ԾՀԹ-ի առաջընթացի կիսամյակային և տարեկան հաշվետվություններում, որոնք պատրաստվելու են ՀԲ-ի համար:

ԱԲԼՄ-ի տեղական համակարգողը և ԱԲԼՄ-ի համակարգողի կոնտակտային տվյալները կհրապարակվեն (տե՛ս Հավելված 2):

Ծրագրի և ԱԲԼՄ-ի մասին տեղեկատվությունը հասանելի կլինի ԾՀԹ-ի կայքում և կտեղադրվի Ծրագրի տարածքում թիրախային համայնքների տեղեկատվական տախտակների վրա: Տեղեկատվություն կարելի է ստանալ նաև ԱԲԼՄ տեղական համակարգողից:

ԱԲԼՄ-ն չի խոչընդոտի դատական միջոցների հասանելիությանը:

4.5. Սեռական շահագործման և չարաշահման/Սեռական ոտնձգությունների հետ կապված բողոքներ

ՇՆՊ-ն սահմանում է զգայուն ընթացակարգեր՝ կապված Սեռական շահագործման և չարաշահման (ՍՇՉ) և Սեռական ոտնձգությունների (ՍՈ) բողոքների հետ՝ ապահովելով տուժածների նկատմամբ կենտրոնացված մոտեցում:

Բոլոր բողոքները, հատկապես ՍՇՉ/ՍՈ-ի հետ կապված, կքննվեն խիստ գաղտնիությամբ: Տուժածի ինքնությունը պաշտպանված կլինի բոլոր փուլերում: Ընթացակարգը կհետևի Տուժածի վրա կենտրոնացած մոտեցմանը՝ առաջնահերթություն տալով Տուժածի կարիքներին, համաձայնությանը և նախապատվություններին: Կստեղծվեն աջակցության ծառայությունների ուղղորդման մեխանիզմներ՝ օգնելու Տուժածին գտնել ծառայություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել (առողջապահական, իրավական կամ հոգեսոցիալական և այլն):

ՍՇՉ/ՍՈ բողոքների հետաքննությունները կքննարկվեն զգայուն և գաղտնի: Ոչ մի գործողություն չի ձեռնարկվի առանց տուժածի համաձայնության: Տուժածը կներգրավվի որոշելու, թե ինչպես է քննարկվում բողոքը, ներառյալ՝ հետաքննության շարունակումը: Կգործի առանց վրեժխնդրության խիստ քաղաքականություն՝ ապահովելով, որ Տուժածները և վկաները պաշտպանված լինեն ցանկացած ձևի վրեժխնդրությունից ՍՇՉ/ՍՈ դեպքերի մասին հայտնելու համար:

ՍՇՉ/ՍՈ բողոքները առաջնահերթ կլինեն և կլուծվեն հստակ սահմանված ժամկետում, սովորաբար 30 օրվա ընթացքում կամ ավելի շուտ՝ կախված դեպքի ծանրությունից: Տուժածը պարբերաբար կտեղեկացվի բողոքների լուծման գործընթացի առաջընթացի մասին՝ ապահովելով ընթացակարգի թափանցիկությունը և վստահությունը:

Աշխատանքի վայրի մտահոգություններին առնչվող բողոքները, ներառյալ սեռական ՍՇՉ և ՍՈ հետ կապված բողոքները, ներկայացված են նաև Ծրագրի ԱԿԸ-ում:

Հավելված 1. Յուրաքանչյուր բաղադրիչի ներքո Ծրագրի գործողությունների մանրամասն նկարագրությունը

Ծրագիրը կֆինանսավորի չորս բաղադրիչ: Ծրագրի իրականացման ժամանակահատվածը կկազմի վեց տարի:

Ծրագրի գործիքը ներդրումային ծրագրերի ֆինանսավորումն է՝ Կատարողականի վրա հիմնված պայմաններ (ՆՕՖ-ԿՀՊ), որը կազմակերպված է չորս բաղադրիչների շուրջ՝ ներառյալ մեկ բաղադրիչ ԿՑ-ներով, հետևյալ կերպ. (i) Բաղադրիչ 1՝ Ջրային ոլորտի բարեփոխում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում (ԿՀՊ-ներով); (ii) Բաղադրիչ 2՝ Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում; (iii) Բաղադրիչ 3՝ Ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում; և (iv) Բաղադրիչ 4՝ Ծրագրի Կառավարում: Կիրականացվի գենդերային բացի և սոցիալական գնահատում՝ բաց թողնված տեղեկատվությունը լրացնելու համար, որը հատկապես վերաբերում է 1-ին և 2-րդ բաղադրիչների ներքո առաջարկվող միջամտություններին, ՋՕԸ-երում և գյուղական ՋՋ որոշումների կայացման մարմիններում անդամակցությանը և ներկայացվածությանը, ինչպես նաև ՋԿ-ի և Ջրառի մարդկային ռեսուրսների քաղաքականությանը, որոնք կապված են կին աշխատակիցների ներգրավման, պահպանման և առաջխաղացման հետ:

Բաղադրիչ 1՝ Ջրային ոլորտի բարեփոխում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում (20 միլիոն ԱՄՆ դոլար): Սա ԿՀՊ-ներով բաղադրիչ է, որն աջակցություն կցուցաբերի ՏԿԵՆ-ին և ՋԿ-ին առանցքային առաջնահերթ ոլորտներում՝ ներառյալ. (i) համապարփակ Ազգային ջրի ռազմավարության, Ազգային ոռոգման ռազմավարության, Գյուղական բնակավայրերում խմելու ջրի և ջրահեռացման ռազմավարության և Ազգային ոռոգման գլխավոր հատակագծի մշակում, որոնք բոլորը պետք է մշակվեն և հաստատվեն ՀՀ Կառավարության կողմից, և հաշվի առնեն OP7.50 անդրսահմանային գետափնյա մտահոգությունները; (ii) ոռոգման ջրի սակագների համակարգի վերանայում՝ անցում կատարելով փաստացի ոռոգվող հողի վրա հիմնված՝ ֆիքսված վճարների և ոռոգվող հողի վրա ջրի փաստացի օգտագործման վրա հիմնված փոփոխական վճարների սահմանմանը; (iii) Ակտիվների պահպանման հմնադրամ և Ակտիվների պահպանման պլան, որը պետք է մշակվի ՋԿ-ի և/կամ Ջրառի կողմից՝ նվիրված ցանկացած նոր արդիականացված ոռոգման սխեմայի պատշաճ շահագործմանն ու պահպանմանը (ՇԵՊ); (iv) ջրային ոլորտի կարևոր օրենսդրության վերանայում, ներառյալ Ջրային օրենսգիրքը, ոռոգման նորմերը և ՋՕԸ-ների մասին օրենքը; և (iv) Ոռոգման ջրի հաշվառման և հարմարվողականության ազգային կենտրոնի (ՈՋՀՀԱԿ) ստեղծում: ՈՋՀՀԱԿ-ը կտրամադրի կարևոր տեղեկատվություն, գործիքներ և հավելվածներ, որոնք անհրաժեշտ են մոնիտորինգի, կանխատեսման և կլիմային հարմարվելու համար: ՈՋՀՀԱԿ-ը կծառայի նաև որպես համայնքներին տեղեկություններ հաղորդելու մեխանիզմ, օրինակ՝ մասնակցային խորհրդատվությունների, համայնքային ֆորումների, տեղական ՀԿ-ների հետ համագործակցության միջոցով՝ կլիմայի և ջրի վերաբերյալ կարևոր տվյալներ փոխանակելու և հավելվածները տրամադրելու համար: Բաղադրիչ 1-ը կներառի երկու կատարողականի վրա հիմնված պայմաններ (ԿՀՊ), ինչպես նկարագրված է ստորև:

Ենթաբաղադրիչ 1.1 և ԿՀՊ 1՝ Ազգային ջրային ռեսուրսների քաղաքականության և պլանավորման հզորացում (3,4 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ԿՀՊ -ն աջակցություն կցուցաբերի ՏԿԵՆ-ին և ՋԿ-ին՝ մշակելու և հաստատելու համապարփակ Ազգային ջրի ռազմավարություն, տասնամյա Ազգային ոռոգման ռազմավարություն, Գյուղական բնակավայրերում ՋՋ ռազմավարություն և Ոռոգման գլխավոր հատակագիծ: Այս ենթաբաղադրիչը կուսումնասիրի նաև Հայաստանում ջրային ոլորտի կառավարման բոլոր գործող իրավական շրջանակները, ներառյալ Ջրային

օրենսգիրքը, ՋՕԸ-ների մասին օրենքը, կիրականացնի ոռոգման նորմերի և այլ հարակից օրենսդրական ակտերի վերանայում:

ԿՀՊ 1-ը ներառում է երեք ենթա-ԿՀՊ, որոնք կապված են ՀՀ Կառավարության կողմից հետևյալի նախագծման, մշակման և հաստատման հետ. (i) համապարփակ Ազգային ջրի ռազմավարություն (ԿՀՊ#1.1); (ii) Ազգային ոռոգման ջրի ռազմավարություն (ԿՀՊ#1.2); և (iii) Գյուղական բնակավայրերում խմելու ջրի և ջրահեռացման ռազմավարություն (ԿՀՊ#1.3): Այս ռազմավարությունների հաստատումը կլինի 2-րդ փուլի մեկնարկի նախապայման: Ծրագիրը ներդրումներ կկատարի նաև Ազգային ոռոգման գլխավոր հատակագծում, որը կկատարի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, կգնահատի բնապահպանական կայունությունը, սոցիալական ներառականությունը և կլիմայական հարմարվողականությունը զգայուն տարածքներում: Գյուղատնտեսության դինամիկայի և շուկայական ներուժի մանրակրկիտ վերլուծությունը կուղղորդի ներդրումները, գլխավոր հատակագծի մշակման Առաջադրանքի պայմաններին (ԱՊ) համահունչ՝ հաշվի առնելով OP 7.50-ի հնարավոր խնդիրները:

Ենթաբաղադրիչ 1.2՝ Ոռոգման ոլորտի կառավարման և ծառայությունների մատուցման բարելավումը (16,6 միլիոն ԱՄՆ դոլար) կֆինանսավորի հետևյալ գործողությունները.

Համապարփակ ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագիր՝ ՋԿ-ի և Ջրառի-ի գործառույթները բարելավելու համար (5,3 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ենթաբաղադրիչը կֆինանսավորի հետևյալը. (i) Տեխնիկական աջակցություն (ՏԱ) կազմակերպչական աուդիտի/ինստիտուցիոնալ գնահատման համար, ներառյալ գենդերային և ներառման ասպեկտները, ՋԿ-ի և Ջրառի ներքին կառուցվածքի և/կամ աջակցություն ՀՀ Կառավարությանը՝ նոր ջրային ոլորտի գործակալություն ստեղծելու համար: Եթե ՀՀ Կառավարությունը ստեղծի նոր գործակալություն, ապա այս բաղադրիչը կֆինանսավորի ՏԱ-ը և ապրանքների ու ծառայությունների գնումը՝ այն ստեղծելու և գործարկելու համար. (ii) առանձին հաջորդիվ իրականացվող ՏԱ՝ ՋԿ-ի, Ջրառ իրականացնող ընկերության և տեղամասային անձնակազմի ներքին կարողությունների զարգացման համար: Առնչվող գնումները կներառեն սարքավորումներ (ներառյալ համակարգիչներ, դաշտային գործիքներ, տրանսպորտային միջոցներ և ջրաչափեր), ինչպես նաև Ակտիվների կառավարման համակարգ, որը բաղկացած կլինի Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) վրա հիմնված Կառավարման տեղեկատվական համակարգից (ԿՏՀ):

Ոռոգման ջրի սակագների վերանայում (1,55 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ենթաբաղադրիչը կկենտրոնանա ոռոգման ոլորտի սակագների և ֆերմերների ներդրումների բարեփոխման վրա՝ հավասարակշռելով ծախսերի վերականգնման և մատչելիության հիմնական սկզբունքները[35] և անցում կատարելով ոռոգվող հողի վրա հիմնված ֆիքսված վճարներին և ջրի սպառման վրա հիմնված փոփոխական վճարներին: Բարեփոխումների գործընթացն իրականացնելու համար այս ենթաբաղադրիչը ներառում է մեծածախ ոռոգման ջրամատակարարման ծախսերի հիմնական վերլուծության իրականացում և մատչելիության ու վճարելու պատրաստակամության ուսումնասիրությունների անցկացում, սակագնային մեթոդաբանության մշակում և փուլային մոտեցում ներառող գործարկման պլան, որն կաջակցի այն ֆերմերներին, ովքեր ի վիճակի չեն վճարել ՇՆՊ ծախսերի դիմաց:

ԿՀՊ 2-ը ներառում է երեք ենթա-ԿՀՊ. (i) WISE ծրագրի շրջանակներում նոր արդիականացված ոռոգման սխեմաների ՇՆՊ-ի համար նախատեսված Ակտիվների պահպանման հիմնադրամի ստեղծում: Հիմնադրամը սկզբում կարող է ֆինանսավորվել պետական բյուջեի միջոցներով և աստիճանաբար սկսել ֆինանսավորում ստանալ Ջրառի մեծածախ ջրամատակարարման

վերանայված սակագներից և ՋՕԸ-ների անդամավճարներից՝ համակարգի շահագործումից սկսած երկու տարվա ընթացքում (ԿՀՊ#2.1). (ii) ՋՕԸ-ների վերանայված մեծածախ ոռոգման սակագների և անդամավճարների մեթոդաբանությունը հաստատվել է 6 ՋՕԸ-ների համար, որը համահունչ է ՋՕԸ-ների մասին օրենքին, ինչպես նաև ունի երկու մասից բաղկացած կառուցվածք (ֆիքսված և ծավալային) ՈԾՎ-ի համար (ԿՀՊ#2.2). և (iii) սակագների գործարկման պլանի մշակում և հաստատում հաղորդակցության ռազմավարության հետ միասին՝ այն ՋՕԸ-ներին իրազեկելու համար, որոնց վրա ազդեցություն կունենան սակագների և անդամավճարների բարձրացումները (ԿՀՊ#2.3):

Ջրօգտագործող ընկերությունների կարողությունների զարգացման ծրագիր (1,6 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ենթաբաղադրիչի միջոցով ծրագիրը աջակցություն կցուցաբերի վեց թիրախային ՋՕԸ-երին: Տեխնիկական աջակցությունը կտրամադրվի վերստեղծված ՋՕԸ-ների աջակցման խմբերի միջոցով և կներառի իրավական, վարչական, տեխնիկական, կառավարման և ֆինանսական կառավարման հնարավորությունների հզորացում: Սա կարող է ներառել տարբեր թեմաների շուրջ վերապատրաստումներ (ծրագրի 1-ին տարում իրականացված կարողությունների կարիքների համապարփակ գնահատմամբ ՋՕԸ-ների բոլոր աշխատակիցների և անդամների համար, այդ թվում՝ կանանց և բոլոր տարիքային խմբերում), ինչպես նաև սարքավոումների տրամադրում (օրինակ՝ ջրաչափեր, IT սարքավորումներ և գրասենյակային կահույք, հատուկ տեխնիկական գործիքներ և մեքենաներ): Այս գործունեության շրջանակներում կլուծվեն մի քանի հիմնական խնդիրներ՝ (i) ՋՕԸ-ների չափի և վերակազմավորման գնահատման, Վարչական խորհուրդների[36] հզորացման, մասնակցային կառավարման ուժեղացման, ընտրությունների և մասնակցային որոշումների կայացման բարելավման և ջրօգտագործողների իրազեկության բարձրացման միջոցով ինստիտուցիոնալ/կառավարման ուժեղացում, ջրի արդյունավետ օգտագործման վերաբերյալ. (ii) ՋՕԸ-ների կարողությունների զարգացում գենդերային ուղղվածության դասընթացների կազմակերպման, սարքավորումների արդիականացման, աշխատանքային պայմանների բարելավման և կանանց ու երիտասարդ մասնագետների ներգրավման միջոցով, այդ թվում՝ առաջնորդող և տեխնիկական պաշտոններում, հատկապես հեռավոր շրջաններում, կանանց և երիտասարդ շրջանավարտների համար թիրախային իրազեկման ծրագրերի ստեղծման միջոցով՝ համալսարաններում և տեխնիկական ուսումնարաններում՝ ջրային ոլորտում ստաժավորման և աշխատանքի հնարավորությունների մասին տեղեկացնելու նպատակով, երիտասարդ օգտագործողներին և կին թեկնածուներին խրախուսելու ու ընտրություններին առաջադրելու համար; և (iii) ջրային ռեսուրսների կառավարման բարելավում՝ ԱՏՀ ջրի հաշվառման արդիականացման, ջրի տարեկան պլանավորման իրականացման, ջրաչափերի տեղադրման և ծավալային ոռոգման վճարների անցման միջոցով:

Այս ենթաբաղրիչը կֆինանսավորի նաև ջրի խնայողության և կառավարման տեխնոլոգիաները ՋՕԸ-ների տղամարդ և կին անդամների համար՝ նվազեցնելու կլիմայական ռիսկերը և բարձրացնելու ջրի արդյունավետ սպառումը՝ կլիմային հարմարվելու համար: Այն կտրամադրի կլիմայակայուն ոռոգման ժամանակակից համակարգեր, որոշումների կայացման աջակցման համակարգեր բջջային հավելվածների միջոցով, թվային խորհրդատվական և վաղ նախազգուշացման ծառայություններ՝ կլիմայի և եղանակի վերաբերյալ տվյալների հասանելիությունը բարելավելու համար: Վերապատրաստումները կինտեգրվեն տեխնոլոգիաների հասանելիության հետ՝ աջակցելու տեղեկացված որոշումների կայացմանը և կլիմայի հանդեպ կայունությանը, ինչպես նաև խթանելու երկխոսությունը (երիտասարդ) ֆերմերների հետ՝ արձանագրելով նրանց փորձն ու կարիքները: Այս Ենթաբաղրիչը կխթանի նաև երիտասարդների և կանանց մասնակցությունը ՋՕԸ-ների որոշումների կայացման գործընթացում՝

վերանայելով խոչընդոտները, առաջարկելով գործողություններ և իրականացնելով իրազեկման արշավներ և հմտությունների զարգացման ծրագրեր՝ Կառավարման, շահագործման և պահպանման (ԿՇՊ) մեջ նրանց մասնակցությունն ավելացնելու համար:

Ոռոգման ջրի հաշվառման և հարմարվողականության ազգային կենտրոնի ստեղծում և գործարկում (8,15 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ենթաբաղադրիչը կստեղծի ՈՋՀՀԱԿ ՋԿ-ի կազմում կամ նոր հողի և ջրի գործակալությունում՝ ջրային ռեսուրսների կառավարումը բարելավելու համար: Հիմնվելով Հայաստանի ԱՏՀ-ի վրա հիմնված համակարգի վրա՝ այն կներառի հեռահար գրանցումը, մոնիտորինգը և կլիմայական տվյալները՝ ջրի հաշվառումը, մշակաբույսերի մոնիտորինգը և ոռոգման պլանավորումը բարելավելու համար: Կենտրոնը կարդիականացնի որոշումների կայացման մեխանիզմը ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ՝ առաջարկելով եղանակի կանխատեսում, վաղ նախազգուշացման համակարգեր ջրհեղեղների և երաշտների համար, ինչպես նաև կլիմայակայուն ջրային կառավարման գործիքներ: ՈՋՀՀԱԿ-ը նաև կամրապնդի տեղական մոնիտորինգի ցանցերը, կստեղծի ազգային հեռահար գրանցման հարթակ և կհամակարգի միջգերատեսչական համագործակցությունը: Այն կպարզեցնի տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, կլրացնի մոնիտորինգի բացերը, կաջակցի կլիմային հարմարվելուն ոռոգման պլանավորման և ջրի բաշխման հարցերում, և կմշակի որոշումների կայացմանն աջակցող գործիքներ՝ բարձրացնելու կայունությունը անբարենպաստ եղանակային և կլիմայական փոփոխականության նկատմամբ՝ միաժամանակ սահմանելով ոլորտային դերերը, պատասխանատվությունները և հաշվետվողականությունը: ՈՋՀՀԱԿ-ը կստեղծի նաև Ջրային ոլորտի մասնագետների վերապատրաստումների բաժին՝ ոռոգման համակարգի արդիականացման վերաբերյալ տեխնիկական փորձաքննությունը բարձրացնելու համար՝ ներառելով շահագործումը, պահպանումը, կառավարումը և համագործակցությունը միջազգային նախագծողների հետ: Այն կմշակի ոռոգման համակարգի վերաբերյալ ազգային թվային գրադարան՝ հիմնական ռեսուրսները թարգմանելով հայերեն: Երիտասարդ և միջին մակարդակի մասնագետների համար թիրախային ուսուցման ծրագիրը կկենտրոնանա ոռոգման ենթակառուցվածքների արդիականացման և համակարգի կառավարման վրա՝ ներառելով Վերահսկիչ կառավարման և տվյալների ձեռքբերման (SCADA) համակարգերը, ջրանցքների, խողովակաշարերի նախագծումը և կոռոզիայի մեղմացումը: Դասընթացները կանցկացվեն ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակով՝ համագործակցելով հայտնի փորձագետների հետ, որոնց մասնակիցները նյութեր կտեղադրեն թվային գրադարանում:

Բաղադրիչ 2. Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում (30 միլիոն ԱՄՆ դոլար) կկենտրոնանա Հայաստանի ընտրված տարածքներում գյուղական ՋՋ արդյունավետ և ֆինանսապես կայուն ծառայությունների բարելավված հասանելիության ապահովմանը՝ երաշտի, ջրհեղեղների և ծայրահեղ շոգի դեմ կլիմայական կայունությունը բարձրացնելու համար: Դա կիրականացվի՝ բարելավելով կարգավորող շրջանակը և ինստիտուցիոնալ կարողությունները՝ ոլորտի բարեփոխումներն առաջ մղելու և կայուն ծառայությունների մատուցումը խթանելու համար՝ պատշաճ կերպով հաշվի առնելով կլիմայի փոփոխության ընթացիկ և սպասվող ազդեցությունները: Այն հետագայում կաջակցի ՀՀ Կառավարությանը չսպասարկվող գյուղական բնակավայրերում անվտանգ կառավարվող ջրամատակարարման հասանելիության բարելավմանը՝ ջրամատակարարման ենթակառուցվածքների վերականգնման և կառուցման միջոցով, որոնք կներառեն ՀԲ-ի Կայուն ջրային ենթակառուցվածքների համառոտագրից ինժեներական նախագծման սկզբունքներ՝ զուգակցված պլանավորման, իրականացման և սպասարկման գործընթացներում խորհրդատվությունների, կենտրոնացված խմբերի և այլ միջոցների միջոցով կանանց

մասնակցությամբ ներառական ջրամատակարարման ծառայությունների մատուցման ստեղծմամբ: Փուլ 1-ին շրջանակներում կոյուղու ենթակառուցվածքները չեն դիտարկվելուի, այն դիտարկվելու է միայն Ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում: Այս բաղադրիչը կներառի խորհրդատվություններ բոլոր ազդեցության ենթակա համայնքների անդամների հետ՝ ընդգծելու համայնքների մեծ դերը ՋՋ-ի պլանավորման և ծառայությունների մատուցման հարցում: Այն կբարձրացնի ՋՋ-ի հաշվետու և թափանցիկ ծառայությունների մատուցումը:

Ենթաբաղադրիչ 2.1. Ինստիտուցիոնալ համակարգի ուժեղացում, կարողությունների զարգացում և կարգավորող մեխանիզմների բարեփոխում (7 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ենթաբաղադրիչն աջակցելու է գործողություններին՝ ազգային, մարզային և տեղական մակարդակներում՝ ՋՋ ծառայությունների մատուցման և կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած երաշտներին, ջրհեղեղներին և ծայրահեղ շոգի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կարողությունների ձեռք բերման նպատակով: Մասնավորապես, ենթաբաղադրիչն աջակցելու է (i) ՀՀ բոլոր մարզերում ԳՋՋ ծառայությունների կարգավիճակի վերաբերյալ հիմնական տեղեկատվության հավաքագրմանը. (ii) չսպասարկվող տարածքների համար ծառայությունների բարելավման և իրականացման ճանապարհային քարտեզի պատրաստմանը՝ ներառյալ ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածքի և միջավայրի բարելավումը. (iii) համապարփակ մոնիտորինգի համակարգի շրջանակի մշակմանը. (iv) ՋԿ-ում մոնիտորինգի և վերահսկողության գործիքների ներդրմանը՝ ամբողջ երկրում ՋՋ ոլորտի վերահսկողության և վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու համար. (v) տեխնիկական աջակցության իրականացմանը՝ ջրի որակը բարելավելու, ջրի քանակն ավելացնելու, չհաշվառվող ջրի (ՉՋ) քանակը նվազեցնելու և համայնքի գոհունակությունը բարձրացնելու համար. (vi) սոցիալ-մշակութային և գենդերային գնահատմանը՝ ուսումնասիրելու համար, թե ինչպես են այս չափումները արտացոլված ազգային քաղաքականություններում, ռազմավարություններում, ոլորտային ծրագրերում, ինչպես նաև բացահայտելու ՋՋ-ի հասանելիության և ծառայությունների հետ կապված բացերը թիրախավորված չսպասարկվող տարածքներում. (vii) Գյուղական բնակավայրերում ՋՋ ոլորտի կարողությունների զարգացման ռազմավարության և պլանի մշակմանը և դրա հետ կապված ծախսերին՝ ՋՋ ծառայությունները ավելի լավ բացահայտելու, նախագծելու, իրականացնելու և կառավարելու համար. (viii) ուսուցման ծրագրի և Տեղեկատվության, կրթության և հաղորդակցության (ՏԿՀ) ծրագրի նախագծմանն ու իրականացմանը, որոնք ներառում են դասընթացներ (ա) ՋՋ համակարգի պլանավորման, նախագծման, կառուցման և պահպանման համար, (բ) կայուն ԳՋՋ ծառայությունների մատուցման համար համակարգի շահագործման և պահպանման պայմանավորվածությունների, (գ) գնումների ընթացակարգերի և գործելակերպի. (դ) ֆինանսական հաշվառման և հաշվետվությունների և (ե) ԳՋՋ համակարգի մոնիտորինգի և գնահատման համար. (ix) գյուղական բնակավայրերում ջրահեռացման համակարգի տեխնոլոգիաների և ՋՋ ծառայությունների մատուցման մոդելների ազգային կատալոգի մշակմանը, ներառյալ մասնավոր հատվածի տարբերակների գնահատումը՝ ապագայում ամբողջ երկրում իրականացնելու համար. (x) ՀՀ բոլոր մարզերի չսպասարկվող տարածքների համար ԳՋՋ համակարգերի և ծառայությունների ներդրումային պլանի մշակմանը՝ համաձայն սպառողի հետ համաձայնեցված առաջնահերթության չափանիշներին և հիմնվելով ամբողջ երկրում ԳՋՋ ծառայությունների համապարփակ գնահատման վրա. և (xi) ԳՋՋ ճանապարհային քարտեզի մշակմանը չսպասարկվող տարածքների համար՝ ներառյալ ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածքի բարելավումը (և մասնավոր հատվածի տարբերակների դիտարկումը):

ՋՋ ծառայությունների ֆինանսական կայունությունը բարելավելու նպատակով համապարփակ կարգավորող բարեփոխում: ՋՋ ոլորտի բարենպաստ միջավայրի հիմնական բաղադրիչը հուսալի կարգավորող շրջանակն է: Բաղադրիչն աջակցելու է ՋՋ սակագների բարեփոխման համապարփակ ծրագրի մշակմանն ու իրականացմանը՝ ապահովելու համար, որ առկա լինեն կայուն գնագոյացման մոդելներ, որոնք արտացոլում են ինչպես գործառնական ծախսերը, այնպես էլ արդար և հավասարակշռված սպառողական սակագները՝ միաժամանակ հաշվի առնելով տարածաշրջանային սոցիալ-տնտեսական պայմանները և համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին: Մշակված կարգավորող բարեփոխումը պետք է դիտարկի ոլորտի երկարաժամկետ տեսլականը և պետք է լինի բավականաչափ ճկուն՝ ապագա զարգացումներին համապատասխանելու համար: Բարեփոխումների գործընթացն իրականացնելու համար այս գործողությունը ներառում է ՋՋ ծախսերի հիմնական վերլուծության իրականացում և մատչելիության ու վճարելու պատրաստակամության ուսումնասիրությունների անցկացում: Բարեփոխումների այս գործընթացում ուսումնասիրվելիք լրացուցիչ գործունեությունները ներառում են կառավարության սուբսիդավորման վերաբերյալ առաջարկություններ այն ջրօգտագործողների համար, ովքեր ի վիճակի չեն վճարել ՇԵՊ ծախսերի լրիվ վերականգնման վճարները: Բացի սակագնային մեթոդաբանության մշակումից, ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ կառավարությունը կմշակի և կհաստատի սակագների գործարկման պլան՝ համապատասխան հաղորդակցման ռազմավարության հետ միասին՝ սակագների բարձրացումից տուժած համայնքներին իրազեկելու, ինչպես նաև վարքագծի փոփոխության և շուկայավարման արշավ անցկացնելու նպատակով:

Մասնավոր կոնցեսիոն պայմանավորվածություններ: Ենթակառուցվածքների հետագա ներդրումներին և ՋՋ արդյունավետ ծառայությունների մատուցմանն աջակցելու և թույլ տալու համար չափազանց կարևոր է վարձակալի և ՀՀ կառավարության միջև պայմանագրային հարաբերությունները: Քանի որ ներկայիս պայմանագիրը որոշակի լարվածություն է առաջացնում, սույն Ծրագիրն աջակցելու է ՀՀ կառավարությանը պայմանագրի շրջանակներում իր գործունեության և վարձակալի հետ համագործակցելու կարողությունների բարելավմանը՝ ապահովելով անկախ ՏԱ մասնավոր պետական գործընկերության (ՄՊԳ) պայմանագրի նպատակների, ձեռքբերումների և պարտադիր սահմանափակումների վերանայման համար, ինչպես նաև պայմանագրի տեխնիկական, ինստիտուցիոնալ, առևտրային, ֆինանսական և իրավական ասպեկտների վերանայման համար: Այս ՏԱ-ն նպատակ ունի ապահովել, որ ՀՀ կառավարությունն ունենա անհրաժեշտ տվյալներ, վերլուծության արդյունքներ և բարելավված տեխնիկական կարողությունները՝ իրեն այդ նպատակներին հասնելու հարցում աջակցելու համար: Պետք է նշել, որ Փուլ 1-ն ուղղակիորեն չի աջակցի կամ միջամտի ՀՀ կառավարության և վարձակալի միջև հնարավոր բանակցություններին: Եթե նման աջակցություն պահանջվի ՀՀ կառավարության կողմից, ապա այն կարող է տրամադրվել Համաշխարհային Բանկի Խմբի (ներառյալ IFC) կողմից Բազմափուլային ծրագրի (ԲՓԾ) 2-րդ փուլի նախապատրաստման կամ իրականացման ընթացքում:

Ենթաբաղադրիչ 2.2. Տեխնիկատնտեսական հիմնավորումներ և ենթակառուցվածքների ներդրումներ (23 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ենթաբաղադրիչն աջակցելու է տեխնիկատնտեսական հիմնավորումների իրականացմանը՝ ՋՋ ոլորտում ներդրումները կատարելու և կառուցվածքավորելու համար, որոնք կդիմանան կլիմայի փոփոխությամբ առաջացած երաշտներին, ջրհեղեղներին և ծայրահեղ շոգին: Տեխնիկատնտեսական հիմնավորումները և մանրամասն ինժեներական նախագծերը կմշակվեն MPA[37]-ի և՛ 1-ին, և՛ 2-րդ փուլերի շրջանակներում առավելագույն առաջնահերթություն ունեցող ներդրումների համար: Հիմնվելով

ներդրումային պլանի շրջանակներում գործունեության առաջնահերթության վրա՝ ենթաբաղադրիչը կիրականացնի ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավման միջամտություններ, որոնք համարվում են «անշահախոս» բնույթի՝ ամենաբարձր առաջնահերթություն ունեցող չսպասարկվող բնակավայրերի համար՝ հիմնվելով տեխնիկական, տնտեսական, սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ նկատառումների հիման վրա, ինչպես նաև ՀՀ կառավարության հետ համաձայնեցված չափանիշների վրա: Ենթակառուցվածքային ներդրումները ներառելու են ջրային ցանցերի կառուցումը, որոնք իրենցից ներկայացնում են առկա սխեմաների փոքր լրացումներ կամ փոփոխություններ, ներառյալ տնային միացումները (և միացումները դեպի դպրոցներ և առողջապահական հաստատություններ, անհրաժեշտության դեպքում), ջրաչափերի տեղադրումը և անհրաժեշտ ջրի մաքրման համակարգերի ստեղծումը, որոնք կներառեն կլիմայակայուն ինժեներական սկզբունքներ: 1-ին փուլում այս ներդրումները սպասվում է, որ կլինեն մի քանի մարզերում, որոնց հաստատումը կհիմնվի տեխնիկական, տնտեսական, սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ նկատառումների վրա: Սա բացառելու է այն գործողությունները, որոնք. (A) ի վիճակի չեն բավարարելու Ծրագրի Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում սահմանված պահանջները, (B) հանգեցնում են նոր սխեմաների ստեղծմանը, որոնք ռիսկի են ենթարկում միջազգային ջրային ուղիների ջրի աղտոտումը, (C) ունեն բարձր ռիսկայնություն ունեցող բնապահպանական կամ սոցիալական ազդեցություններ, և/կամ (D) բացասական ազդեցություն կունենան որևէ կենսամիջավայրի կամ մշակութային ժառանգության տարածքների վրա»:

Բաղադրիչ 3. Ոռոգման ենթակառուցվածքի արդիականացում և համակարգի կառավարում (119 միլիոն ԱՄՆ դոլար) կբարձրացնի երաշտի նկատմամբ կայունությունը՝ ֆինանսավորելով ընտրված ոռոգման համակարգերի վերականգնումն ու արդիականացումը մայր, երկրորդ և երրորդ կարգի ջրանցքների մակարդակներում, որոնք ներկայումս համատեղ կառավարվում են Ջրառ իրականացնող ընկերության կողմից՝ խոշոր մայր ջրանցքի և ջրամբարների մակարդակում, և ՋՕԸ-ների կողմից՝ երկրորդ և երրորդ կարգի բաշխիչ ցանցի մակարդակում: Ջրային կոմիտեի հետ համագործակցությամբ 1-ին փուլի շրջանակներում դիտարկման համար կարճ ցուցակում ընդգրկվել են ոռոգման հինգ սխեմաներ (տես Աղյուսակ 3): Դիտարկվող ոռոգման համակարգերի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 39,580 հա, որը կընտրվի հիդրոլոգիական, տեխնիկական, տնտեսական և գյուղատնտեսական պարամետրերի հիման վրա՝ Շրջանակային Մոտեցման[38] ներքո: 2-րդ փուլի համար բացահայտվել են ոռոգման լրացուցիչ չորս սխեմաներ: Պետք է նշել, որ այս բաղադրիչի ներքո չի իրականացվելու ոռոգման նոր սխեմաների կառուցում և առկա սխեմաների ընդլայնում:

Ենթաբաղադրիչ 3.1՝ Կլիմայակայուն ոռոգման ենթակառուցվածքի արդիականացում և համակարգի կառավարում (114 միլիոն ԱՄՆ դոլար): Սխեմաների ընտրության ժամանակ իրականացվելիք գործողությունները բաղկացած են մանրամասն տեխնիկատնտեսական հիմնավորումներից, ներառյալ տնտեսական և ֆինանսական վերլուծությունը, և բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը՝ կարճ ցուցակում ընդգրկված հինգ ոռոգման համակարգերի վերականգնման/արդիականացման համար (Աղյուսակ 2): Սխեմաների վերջնական ընտրությունը հիմնվելու է տեխնիկական իրագործելիության, ներդրումների գնահատված արժեքի, ֆինանսական և տնտեսական կենսունակության, հատկացված բյուջեի, OP7.50-ի դիտարկումների վրա: Բացի այդ, Ծրագիրը դեռ նախագծման վաղ փուլում կներգրավի ՋՕԸ-երին՝ նախագծերի մշակմանը մասնակցելու և դրանք հավանություն տալու համար: Ընտրված սխեմաներում վերականգնման և/կամ վերակառուցման/արդիականացման համար կդիտարկվեն հետևյալ կառույցները. գլխամասային կառույցներ; մայր ջրանցքների կարևոր հատվածներ շրջված

սիֆոններով; ակվեդուկներ, երկրորդային և երրորդային ցանց; ջրի բաշխիչներ; ջրթողներ; հեղեղատարներ; ջրհեղեղներից պաշտպանող պատնեշներ; ջրի հոսքի և/կամ ծավալի չափման կառույցներ, որտեղ անհրաժեշտ է՝ աղբի հեշտ հեռացման կամ լվացման համար ստուգիչ կառույցներ, կամուրջներ, սպասարկման ճանապարհներ և հարակից պոմպակայաններ՝ նպատակ ունենալով բացահայտել տեխնոլոգիական առաջընթացները, որոնք կարող են արդիականացնել ընտրված համակարգերը (օրինակ՝ պոմպակայանից դեպի ինքնահոսի անցում կատարելը կամ ինքնահոսից դեպի ճնշումային խողովակաշարերի անցումը, որտեղ դա հնարավոր է, կամ ջրանցքի կողային կարգավորող ջրամբարների կառուցումը) և այլ պահանջվող օժանդակ կառույցներ: Այս ենթաբաղադրիչը կիրականացնի նաև Որոտան-Արփա-Սևան փոխանցման թունելի տեխնիկական և ինստիտուցիոնալ գնահատումներ: Որտեղ հնարավոր է, Ծրագիրը առավելագույնի կհասցնի բարձրությունը՝ պոմպային համակարգերից դեպի ինքնահոս անցում կատարելու համար՝ նվազեցնելու էներգիայի սպառումը և նվազագույնի հասցնելու Ջերմոցային գազերի արտանետումները: Տեխնիկատնտեսական հիմնավորման և մանրամասն նախագծման ուսումնասիրությունների շրջանակներուրմ համակարգված կերպով կուսումնասիրվեն գոյություն ունեցող համակարգերը վերականգնելու/արդիականացնելու հնարավորությունները՝ դիտարկելով ջրի կառավարման և մատակարարման կառույցները, որոնք շահագործվում են՝ ժամանակի ընթացքում ջրանցքի ջրի մակարդակը պահպանելու համար՝ անկախ հոսքի արագությունից: Կլիմային հարմարվելու և վտանգների նկատմամբ դիմակայունության սկզբունքները ներդրվելու են Համաշխարհային բանկի Ջրային գործելակերպի ուղեցույցների հիման վրա մշակված բոլոր ներդրումների ընտրության և նախագծման մեջ:

Աղյուսակ 2. 1-ին Փուլի ոռոգման սխեմաների կարճ ցուցակ

Հ/Հ	Ոռոգման սխեմաներ	Ջրի աղբյուրը	ՋՕԸ-ներ, որոնք ներգրավված են ՇՆՊ-ում	Սպասարկման Տարածք (հա)	Փաստացի Ոռոգվող Տարածք (հա)	Ոռոգման տեսակը	Մայր ջրանցքի երկարությունը (կմ)	Երկրորդ կարգի բաշխիչ ցանցի երկարությունը (կմ)	Արդիականացման արժեքը (միլիոն ԱՄՆ դոլար)
1	Ստորին Հրազդանի ջրանցք	Գետ Հրազդան/Ռանչպար պ/կ	Երևան ՋՕԸ, Էջմիածին ՋՕԸ	11,400	7,000	խառը	53.0	43.00	75
2	Արզնի-Շամիրամ	Գետ Հրազդան/ Ապարանի ջրամբար	Կոտայք ՋՕԸ, Արագածոտն ՋՕԸ	20,600	12,000	ինքնահոս	89.1	15.2	130

Հ/Հ	Ոռոգման սխեմաներ	Ջրի աղբյուրը	ՋՕԸ-ներ, որոնք ներգրավված են ՇՆՊ-ում	Սպասարկման Տարածք (հա)	Փաստացի Ոռոգվող Տարածք (հա)	Ոռոգման տեսակը	Մայր ջրանցքի երկարությունը (կմ)	Երկրորդ կարգի բաշխիչ ցանցի երկարությունը (կմ)	Արդիականացման արժեքը (միլիոն ԱՄՆ դոլար)
3	Կոտայքի ջրանցք	Գետ Հրազդան	Կոտայք ՋՕԸ	4,000	1,400	խառը	32.0	74.0	35
4	Լոռու ջրանցք	Գետեր Տաշիր և Ձորագետ, (նաև դոտացիոն գետեր Միսխանա, Ագարակ և Հովանդար)	Լոռի ՋՕԸ	3,080	410	ինքնահոս	47.6	18.0	14
5	Դեբետավան	Գետ Դեբեդ	Տավուշ ՋՕԸ	500	500	խառը	14.0	3.0	4.5
	ԸՆԴԱՄԵՆԸ			**39,580**	**21,310**				**258**

Ենթաբաղադրիչ 3.2՝ SCADA-ի Ներդրում (5 միլիոն ԱՄՆ դոլար): Այս ենթաբաղադրիչը կֆինանսավորի երկու գործողություն։ Առաջին գործողությունը կապված կլինի ջրանցքներից և խողովակաշարերից դաշտային տվյալների հավաքագրման, մշակման և կառավարման հետ՝ կլիմայական կայունությունը խթանելու նպատակով: SCADA-ի համապարփակ պլանի մշակումից հետո դաշտային տվյալների մասով գործողությունները կներառեն (i) կլիմայի փոփոխության ազդեցության տակ գտնվող կրիտիկական հոսքի արագությունների և ջրի մակարդակների ճշգրիտ իրական ժամանակի չափում, (ii) այդ տվյալների փոխանցում, (iii) այդ տվյալների կազմակերպում և արխիվացում, (iv) իրական ժամանակի, ինչպես նաև պատմական տվյալների հեշտ մուտքի ապահովում, (v) այդ նպատակների համար սարքավորումների և ծրագրային ապահովման ստանդարտացում, (vi) տեղադրման, անսարքությունների վերացման և վերանորոգման համար տեխնիկական մասնագետների SCADA թիմի վերապատրաստում, և (vii) պահեստամասերով, փորձարկման, ախտորոշման և բաղադրիչների հավաքման սարքավորումներով լավ համալրված բարձրորակ SCADA կենտրոնի ստեղծում։ Հատկապես կարևոր կլինի տվյալների անվտանգության

և պահուստավորման ստեղծումը: Երբ առաջին գործողությունները լավ ընթանան, ներդրումներ կկատարվեն երկրորդ SCADA համակարգի հետ կապված գործողությունների համար: Երկրորդ SCADA-ի գործողությունները կապահովեն հեռակառավարվող սարքավորումների ձեռքով գործարկում և մոնիտորինգ: Սա SCADA-ի հիմնական ուղղվածությունը չի լինի, այլ արժեքավոր փորձ կապահովի ոռոգման ոլորտում հետագա ներդրումների համար հեռակառավարվող ձեռքով և ավտոմատ (այստեղ ներառված չէ) գործարկման և ավելի մեծ ջրանցքներում ջրի բաշխման մոնիտորինգի համար, որտեղ կկատարվեն արդիականացման ներդրումներ, որոնք հաշվի են առնում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված տեղումների փոփոխականությունը: Ինտեգրվելու է հոսքի չափման տվյալների օգտագործումը: SCADA համակարգը ոչ միայն կօգնի օպերատորներին ջրի կառավարման բարելավման համար իրական ժամանակում տեղեկատվություն տրամադրելու հարցում, այլև կապահովի տվյալների բազաներ հետագա վերլուծության և պլանավորման համար:

Բաղադրիչ 4. Նախագծի Կառավարում (6 միլիոն ԱՄՆ դոլար): ՋԿ-ում կտեղակայվի Ծրագրի համակարգման միջանկյալ թիմ (ԾՀԹ), որը հիմնական պատասխանատվություն կստանձնի Ծրագրի իրականացման համար՝ ներառյալ շինարարական աշխատանքների և ապրանքների ու ծառայությունների գնումը, ինչպես նաև հարակից գնումները և ֆինանսական կառավարումը (ՖԿ), համաձայնեցված բնապահպանական և սոցիալական կառավարման միջոցառումների պահպանումը և նախագծի Մ&Գ: Այս բաղադրիչը կֆինանսավորի անձնակազմի ծախսերը, ելակետային և Ծրագրի ավարտական ուսումնասիրությունները, իրականացումը և հաշվետվությունների ներկայացումը. և գնահատման ուսումնասիրությունների պատրաստումը (օրինակ՝ նախատեխնիկատնտեսական հիմնավորումներ և տեխնիկատնտեսական հիմնավորումներ), մանրամասն ինժեներական նախագծերի հսկողություն և շինարարության վերահսկողությունը: Բաղադրիչը կներառի նաև ԾՀԹ-ի կարողությունների զարգացմանն ուղղված աջակցություն՝ այդ թվում՝ դասընթացներ ԾՀԹ-ի անձնակազմի համար՝ քաղաքացիների ներգրավման հմտությունների զարգացման նպատակով:

Հավելված 2. ԱԲԼՄ տեղական համակարգողների եւ ԱԲԼՄ համակարգողների կոնտակտային տվյալներ

Նկարագրություն	Կոնտակտային տվյալներ
ԱԲԼՄ տեղական համակարգող	
ԱԲԼՄ համակարգող	
Հասցե	
Էլ հասցե	
Վեբ կայք	
Հեռախոսահամար	

Հավելված 3. ՇՆՊ բյուջե

Սույն մոտավոր բյուջեն կազմված է՝ հիմք ընդունելով Ծրագրի շրջանակներում իրականացվելիք հնարավոր գործունեությունը, որը կարող է ֆինանսավորվել Ծրագրի Բաղադրիչ 4-ի շրջանակներում:

Բյուջեի կատեգորիա	Քանակ	Միավորի տարեկան արժեք, $	Հաճախականություն /տարի	Տարի	Ընդհանուր արժեք, $
Անձնակազմի աշխատավարձ					
Համայնքային կապի պատասխանատուներ 6 մարզերում [2]	6	1,000	1	6	36,000
Միջոցառումներ					
Ծրագրի մեկնարկային հանդիպումներ (տարածքի վարձույթ, սննդի կազմակերպում, նյութերի տպագրում)	6	1,500	1	1	9,000
Հաղորդակցության նյութեր, PR փաթեթ (պաստառներ, բրոշյուրներ)	միանվագ գումար				6,000
Քննարկումներ	2	2,000	1	2	8,000
Խորհրդատվություններ խոցելի խմբերի հետ՝ 6 մարզերում	18	500	3	1	27,000
Վերապատրաստումներ					
Դասընթացներ բնապահպանական և սոցիալական հարցերի վերաբերյալ (այդ թվում՝ ՍՇՉ/ՍՈ) Կապալառուի/Խորհրդատուի անձնակազմի համար	2	2,000	1	3	12,000
Անձագանքներ					

[2] Համայնքային կապի պատասխանատուները չեն լինի քաղաքապետարանի աշխատակազմից, նրանք կընտրվեն որպես անհատ խորհրդատուներ յուրաքանչյուր մարզում, որտեղ կիրականացվեն աշխատանքները՝ Ծրագրին աջակցելու համար:

Արձագանքների մոնիթորինգ	1	12,000	1	1	12,000
Շահակիրների ներգրավման ընդհանուր բյուջե					110,000

Հավելված 4. Հանրային քննարկման արձանագրություն

Արձանագրություն

Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի բնապահպանական և սոցիալական (ԲՍ) գործիքների վերաբերյալ հանրային քննարկման

Ամսաթիվ: 15.04.2025

Ժամ: 14:00, Երևան

Վայր: ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, Երևան, Վարդանանց 13ա

Մասնակիցներ: Ջրային կոմիտեի նախագահի տեղակալներ պարոն Մարտիրոս Նալբանդյան և պարոն Դավիթ Մկրտչյան, պետական գերատեսչությունների՝ նախարարություններ, տեսչական մարմններ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, թիրախային մարզպետարանների, «Ջրառ» ՓԲԸ-ի, Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ, ջրօգտագործողների ընկերությունների, «Օրհուս» կենտրոնի ներկայացուցիչներ։ Մասնակիցների ընդհանուր թիվը 30 մարդ (12 կին և 18 տղամարդ)։

Օրակարգ:

1. Ողջույնի և բացման խոսք
2. ԲՍ գործիքների ներկայացում
3. Հարց ու պատասխան, քննարկումներ, շահակիրների հետադարձ արձագանք
4. Հաջորդ քայլեր և փակման խոսք

Նպատակ: Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման (ՋՈԾԲ) ծրագրի շրջանակներում պատրաստված ԲՍ գործիքների հանրայնացում և քննարկում՝

- Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլան (ԲՍՀՊ)
- Շահակիրների ներգրավման պլան (ՇՆՊ)
- Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ (ԲՍԿՇ)
- Տարաբնակեցման շրջանակ (ՏՇ)
- Աշխատանքի կառավարման ընթացակարգեր (ԱԿԸ)։

1. Ողջույնի և բացման խոսք

Ջրային կոմիտեի նախագահի պաշտոնակատար պարոն Մարտիրոս Նալբանդանը բացեց հանրային քննարկումը և ողջունեց մասնակիցներին։ Նա նշեց, որ նախագիծը նպատակ ունի բարելավել ջրային ոլորտի ինստիտուցիոնալ վիճակը, արդիականացնել ոռոգման համակարգերը, ինչպես նաև բարելավել գյուղական վայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները։

2. ԲՍ գործիքների ներկայացում

Ջրային կոմիտեի սոցիալական հարցերի խորհրդատու տիկին Մարինե Վարդանյանը և Ջրային կոմիտեի բնապահպանության խորհրդատու տիկին Քրիստինե Սահակյանը ներկայացրեցին ԲՍ գործիքներն, այդ թվում՝ վարկային համաձայնագրի մաս կազմող Բնապահպանական և սոցիալական հանձնառության պլանը (ԲՍՀՊ), ԲՍԿՇ-ն, ՏՇ-ն և ԱԿԸ-ն: Ներկայացումները վերաբերում էին հիմնական ԲՍ ռիսկերին, առաջարկվող մեղմացման միջոցառումներին, շահակիրների նույնականացմանը, ներգրավման գործողություններին և մեթոդներին, տարաբնակեցման ռիսկերին և ազդեցությանը, տուժած անձանց իրավունքներին և իրավասություններին, ինչպես նաև աշխատանքի անվտանգության և առողջության (ԱԱԱ) ռիսկերին, ինչպես նաև ռիսկերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու առաջարկվող միջոցառումներին, մրցութային փաթեթներում ԲՍ գործիքների ինտեգրմանը, նախագծի գործունեության և աշխատանքների վերահսկողությանն ու մշտադիտարկմանը՝ համաձայն Համաշխարհային բանկի (ՀԲ) ԲՍ ստանդարտների (ԲՍՍ) և ազգային օրենքների:

3. Շահակիրների արձագանք ու քննարկում

Շահակիրներին առաջարկվեց կիսվել իրենց կարծիքով, մտահոգություններով և առաջարկություններով: Բարձրացվեցին հետևյալ հիմնական հարցերը.

Հարցեր և պատասխաններ

1	Կոյուղաջրերը թափվում են ջրային ավազաններ, ինչը խաթարում է էկոհամակարգերը: Օրինակ՝ Արմավիրի մարզում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է խորը հորերից, ինչը ազդում է ստորգետնյա ջրերի մակարդակի վրա և կարող է հանգեցնել լուրջ խնդիրների: Արդյո՞ք հնարավոր է նման խնդիրների լուծումը այս նախագծի շրջանակներում (Էջմիածնի ՋՕԸ):	Ծրագրի ՋՋ (ջրամատակարարում և ջրահեռացում) բաղադրիչի շրջանակներում Արմավիրի մարզը նույնպես դիտարկվել է, սակայն կոնկրետ տարածքների և համակարգերի վերջնական ընտրությունը դեռևս քննարկման փուլում է: Բարձրացված հարցերը կարևոր են, սակայն դրանք հետագայում կհստակեցվեն:
2	Շատ կարևոր է, թե ինչպես են կարգավորվելու ծրագրի կառավարման ընթացակարգային հարցերը, արդյոք նախատեսվում է ունենալ ոռոգման ընդհանուր պլան՝ ամբողջ երկրի մակարդակով, ինչը բավականին լայնածավալ և ներդրումատար գործընթաց է: Կան մի շարք ոլորտային խնդիրներ՝ կապված երկրորդային և երրորդային ոռոգման ցանցերի տեխնիկական վիճակի բարելավման հետ: Արդյոք նախատեսվո՞ւմ են առանձին հանդիպումներ և քննարկումներ	Նման հանդիպումները, անշուշտ, կկազմակերպվեն, որոնց ընթացքում հնարավորություն կլինի անցկացնել արդյունավետ քննարկումներ և փոխանակվել կարծիքներով:

	յուրաքանչյուր ոլորտի համար, որպեսզի շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան բարձրաձայնելու տեխնիկական խնդիրները և ներկայացնելու առաջարկություններ («Ջրառ» ՓԲԸ):	
3	Արդյոք նախատեսվո՞ւմ է լրացուցիչ ջրամբարների կառուցում: Եթե այո, ապա հնարավո՞ր է դրանք դիտարկել ներկայումս ընթացող՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ջրամբարաշինության ծրագրի հետ համատեղ (ՇՄԱՓԿ ՊՈԱԿ):	Ծրագրի 3-րդ բաղադրիչը վերաբերում է մայր ջրանցքներին, ինչպես նաև երկրորդային և երրորդային ոռոգման ցանցերին, և այդ պատճառով չի նախատեսում խոշոր ջրամբարների կառուցում: Ծրագրով նախատեսվում է օրական կարգավորող ջրամբարների կառուցում, որոնք փոքր ավազաններ են և չեն կարող ունենալ լայնածավալ ազդեցություն:
4	Արդյոք հայտնի՞ է, թե քանի ենթածրագիր պետք է ՇՄԱԳ փորձաքննություն անցնի (Օրհուս կենտրոն)	Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործունեությունները հիմնականում կլինեն «Բ» կատեգորիայի՝ համաձայն ՀՀ օրենսդրության: «Ա» կատեգորիայի ազդեցություն ունեցող ծրագրեր չեն նախատեսվում, սակայն հնարավոր են նաև այնպիսի գործունեություններ, որոնք ՇՄԱԳ-ի ենթակա չեն: Ներկայումս անհնար է ասել, թե քանի ենթածրագիր կպահանջի ՇՄԱԳ-ի իրականացում, քանի որ դա կախված է յուրաքանչյուր բաղադրիչի և ենթաբաղադրիչի շրջանակներում նախատեսվող գործունեությունների բնութագրից և մանրամասներից: Բոլոր ենթածրագրերի համար կպատրաստվեն տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ներ՝ Համաշխարհային բանկի ԲՍՍ պահանջներին համապատասխան, որոնք կիրապարակվեն, և ազդակիր համայնքներում կկազմակերպվեն հանրային քննարկումներ:
5	Ինչպե՞ս է կազմակերպվելու և իրականացվելու շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացը մարզերում, մասնավորապես՝ հանրային հատվածի և բնակիչների մասնակցությունը (Օրհուսի կենտրոն):	Թիրախային բոլոր մարզերում կկազմակերպվեն հանրային քննարկումներ՝ բոլոր բացահայտված շահագրգիռ կողմերի, ներառյալ հանրային և մասնավոր հատվածների ներկայացուցիչների մասնակցությամբ:

6	Ինչպե՞ս է իրականացվելու ամբողջ ծրագրի մշտադիտարկումը (Օրհուսի կենտրոն)։	Ամբողջ ծրագրի մշտադիտարկումը կներառի բոլոր ասպեկտները՝ տեխնիկական, շրջակա միջավայրի, սոցիալական և այլն։ Հատկապես դա ապահովվելու է տեխնիկական և հեղինակային վերահսկողության շրջանակում՝ պարբերական զեկույցների պատրաստման և Ծրագրի իրականացման թիմին և Համաշխարհային բանկին ներկայացման միջոցով։ Մշտադիտարկման այցեր կիրականացվեն ԾԻԹ-ի համապատասխան մասնագետների կողմից։ Վերահսկող մարմինները նույնպես կարևոր դեր կխաղան այս գործընթացում, հատկապես՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը։ Բացի այդ, մշտադիտարկման այցեր կիրականացնի նաև Համաշխարհային բանկի թիմն ծրագրի իրականացման ընթացքում։ Մշտադիտարկման բոլոր մակարդակներում ներկայացվող հաշվետվությունները կպարունակեն փաստագրված տեղեկություններ՝ համապատասխան աջակից փաստաթղթերով, լուսանկարներով և այլն։
7	Արդյոք Ծրագիրը ներառու՞մ է անասունների ջրարբիացման համակարգերի կառուցում (Էջմիածին ՋՕԸ)։	Ոչ, անասունների ջրարբիացման համակարգերի կառուցում ներառված չէ Ծրագրում։
8	Ինչպե՞ս կապահովվի շահակիրների մասնակցությունը հանրային քննարկմանը (Էջմիածին ՋՕԸ)	Հանրային լսումները պարտադիր են ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՇՄԱԳ/ՌԵԳ գործընթացների դեպքում։ Օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան նախատեսվում են երկու հանրային լսումներ։ Նշված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները կարևոր դեր ունեն այս գործընթացում, քանի որ հենց նրանք են

		պատասխանատու առաջին հանրային լսումը կազմակերպելու համար, այնուհետև, համայնքի խորհուրդը նախնական համաձայնություն է տալիս նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ: Այն նախագծերի համար, որոնք չեն պահանջում ՇՄԱԳ և փորձաքննություն, նույնպես կկազմակերպվեն տեղամասային ԲՍԿՊ-ների քննարկումներ:
9	Արդյոք տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն ունե՞ն բավարար հմտություններ կամ կարողություններ ծրագրի ներկայացման և հարցերին պատասխանելու համար (Էջմիածնի ՋՕԸ):	Տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են հանրային լսումների կազմակերպման համար՝ ներգրավելով նաև համայնքի բնակիչներին և այլ շահագրգիռ կողմերին: Ծրագրի ներկայացումը և հարցերին պատասխանելը ԾԻԹ-ի գործառույթն է:
10	Ով է առաջարկելու համայնքի ներկայացուցիչներին հանրային լսմանը մասնակցելու համար (Օրհուսի կենտրոն):	Շահակիրները մարզային և համայնքային մակարդակներում նույնականացվել են ՇՆ գործընթացներով և պատշաճ կերպով կհրավիրվեն մասնակցելու հանդիպումներին: Բացի այդ, ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր թիրախային մարզում կընտրվեն համայնքների հետ կապի պատասխանատուներ, ովքեր կաջակցեն ծրագրին՝ կազմակերպելով տարբեր մակարդակների հանդիպումներ մարզային և համայնքային մակարդակներում, այդ թվում՝ խոցելի խմբերի հայտնաբերման և արդյունավետ քննարկումների ապահովման համար:
11	Հնարավո՞ր է իրականացնել նոր ենթակառուցվածքների երկարաժամկետ մշտադիտարկում Ծրագրի ավարտից հետո՝ շահագործման փուլում (Արմավիրի մարզպետարան):	ԾԻԹ-ը վարկային միջոցներով երկարաժամկետ մշտադիտարկում չի կարող իրականացնել: Այս նպատակով պետությունն ունի վերահսկող մարմիններ՝ իրենց համապատասխան գործառույթներով:

Առաջարկություններ

1	ԾԻԹ-ի ավելի սերտ համագործակցություն մարզային իշխանությունների հետ մինչ նախագծման փուլը (Արմավիրի մարզպետարան):

2	Լավ կլինի Աշխատանքի անվտանգության և առողջության մասնագետին ԾԻԹ-ում ներգրավել նախագծման փուլից առաջ (ԱԱՏՄ):
3	Շինարարության պայմանագրերում պետք է ներառվի կետ, որը նախատեսում է աշխատակիցների հետ աշխատանքի պայմանագրերի ստորագրումը՝ ծառայության մատուցման պայմանագրերի փոխարեն. սա կապահովի բոլոր աշխատավարձային և սոցիալական առավելությունները աշխատողների համար (ԱԱՏՄ):
4	Տարածքի սեփականության իրավունքի վավերացում իրականացնել համայնքներում, քանի որ Կադաստրային քարտեզները երբեմն անճշգրիտ են (Լոռի մարզպետարան):
5	Անհրաժեշտություն կա առանձին հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու յուրաքանչյուր ոլորտի համար, որպեսզի շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան՝ ○ հասկանալու, թե ինչպես են կարգավորվելու ծրագրի կառավարման ընթացակարգային հարցերը, արդյոք նախատեսվում է ունենալ ընդհանուր ոռոգման պլան ամբողջ երկրի մակարդակով, ինչը բավականին լայնածավալ և ներդրումատար գործընթաց է, ○ բարձրաձայնելու տեխնիկական խնդիրները և ներկայացնելու առաջարկություններ (Ջրառ):

4. Հետագա քայլեր և փակման խոսք

- Շահագրգիռ կողմերը տեղեկացան, որ նրանց մեկնաբանությունները կքննարկվեն և անհրաժեշտության դեպքում կինտեգրվեն վերջնական ԲՆՍ փաստաթղթերում:
- Փոփոխված փաստաթղթերը կհանրայնացվեն՝ շահագրգիռ կողմերից հետագա կարծիքներ և առաջարկություններ ստանալու նպատակով:
- Քննարկման գործընթացը կշարունակվի՝ մարզերում Ծրագրի մեկնարկային հանդիպումների, համայնքներում հանրային քննարկումների, ազդակիր բնակավայրերում քննարկումների և խոցելի խմբերի հետ արդյունավետ խորհրդատվությունների միջոցով:

Հանդիպումը եզրափակվեց տիկին Սահակյանի և տիկին Վարդանյանի փակման խոսքերով, ովքեր շնորհակալություն հայտնեցին բոլոր մասնակցիների արդյունավետ ներդրման համար և հաստատեցին շրջակա միջավայրին և սոցիալական խնդիրներին ուշադրություն դարձնելու իրենց հանձնառությունը:

Մասնակից գերատեսչությունների / ընկերությունների ցանկը

Ջրային կոմիտե

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ֆինանսների նախարարություն

Էկոնոմիկայի նախարարություն

Շրջակա միջավայրի նախարարություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Արագածոտնի մարզպետարան

Արմավիրի մարզպետարան

Կոտայքի մարզպետարան

Լոռու մարզպետարան

«Ջրառ» ՓԲԸ

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

«Օրհուս» կենտրոն

Երևան ՋՕԸ

Արագածոտն ՋՕԸ

Էջմիածին ՋՕԸ

Տավուշ ՋՕԸ

Լոռի ՋՕԸ

Կոտայք ՋՕԸ

Մասնակիցների ցանկ

(Ենթակա չէ հանրայնացման)

Լուսանկարներ

(Ենթակա չեն հանրայնացման)